



19 NOV 2010

891.85

Դ-69

թ. 90

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

№ 90

ST. PRZYBYSZEWSKI

Չիկն

ՍՏ. ՊԵՐԵԼԵՎԵԼՈԿԻ

= SNIEG =

= Դրամա =

IV ԱՐԱՐԻԱԺՈՎ

Թարգմ.

ԶԵԼԵԼ ՑԵՐ-ԳՐԲԳԱՐԵՑՆ

40 ԿՐ.

Փափկիս

Տպարան՝ ՀՀ ԵՐՄԱԿ ԴՐԱՄԱԿԱՐԱՎ ՓԱԼ., 6. Հեռախոս 566

1911

891.85

Դ-72 սր

ST. PRZYBYSZEWSKI

# ≡ ԶԻՒ ≡

Ս. ՊԵՐԵԳԵԼՈՎԻ

= SNIEG =

1002  
5402

= Գրամա =  
IV ԱՐԱՐԻԱՑՈՎ



— Թարգմ. —  
ԶԱՐԱ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆ

Տպարան «ՀԵՐՄՈՒՅԱ» Գրամակայա փող., 6. Հեռախոս 566

1911

22 JUL 2013

16062

Настоящая пьеса подъ заглавіем „СНѢГЪ“ перев.  
Дж. Теръ-Григорьяна, разрѣшена Намѣстникомъ Его  
Императорскаго Величества на Кавказѣ для пред-  
ставлениія на сценахъ края. (Отзыvъ канцеляріи за  
№ 21693).

25-го Октября 1911 г. гор. Тифлисъ.

Ն Հ Կ Բ


ՄԵՐ ՏԱՂԱՆԴԱԿԱՐ

ՎԻՊԱՍԱՆԻ ԵԿ ԳՐԱՄԵՑՈՒԹ

ՃԻՐՎԱՋԱՐԵՒՆ

Նրա գրական գործունէութեան

ՅՈՒՆԻՏ ՅՈՒՆԻՏ ՅՈՒՆԻՏ



## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Թաղեռն

Բրոնկա

Նըս ամուսինը

Եւա


Բըօնկայի ընկերունին

Կազիմիր

Թաղէուշի եղբայրը

Մակրինա

Սալահան



Ստ. Պշիբըշևկու Զիինը նորագոյն ժամանակների ամենայայտնի պիէսներից մէկն է:

Նա իր մէջ պարունակում է համաշխահղային թախիծի սիմվոլ, որ մահւան հետ միասին անցնում է տարակուսած մարդկութեան վրայով հաղորդելով նրան ոյժ, բայց միենոյն ժամանակ և թուլութիւն:

Մարդկային հպարտ սիրտը քարանում է այնպէս, ինչպէս երկիրը ցրտաշունչ հողմերից դառնում է սառած դիակ: Եւ ինչպէս վերջնիս համար ձիւնի հաստ շերտ է պէտք, որ դիակը նորից կենդանանայ և կեանը բողբոջներ տայ, այնպէս էլ քարացած սրտի համար հարկաւոր է Բրօնկայի նման մաքուր ու քնքոյշ էակ,—ջերմութիւն տուղ և երկիրը համբուրող ձիւնի նման մաքուր ու ճերմակ, անմեղ Բրօնկայի նման, որին այնքան բանաստեղծական ստորֆներ է նւիրել Պշիբըշևկին:

Զիինը, ինչպէս մի դրամատիքական սագա, ստեղծագործական ալիքների վրայ դուրս է քերում նրբացած ու բաղարակիրթ մարդկութիւնը և տալիս է խորաթափանց պատկերներ, որոնք կամ սլանում են դէպի բարձր ու վսեմ գագաթները, կամ գահավիժւում են դէպի խաւար անդունդները... Իսկ Պշիբըշևկու համեմատութիւնները՝ կիսաձայները, կիսախօսքերը... Այս, Զիինի հեղինակը մէկն է այն երջանիկներից, որոնք գերում են հոգեկան տրամադրութիւնների ամբողջ գամման արտայայտող հազւագիւտ ձայներին, բառերին:

Զիինը վերապրելը և ամբողջովին զգալը ինքնըստ ինքեան դժւար ինդիր է. բայց աւելի ևս դժւար է արտայայտել պիէսի հիմնական գաղափարը թէ ամբողջովին և թէ առանձին մանրամասնութիւններով: Ահա այդ պատճառով Զիինի վերարտադրումը և արժանաւոր կերպով ներկայացնելը կարելի է համարել արւեստագիտական մի ահագին միսիա:

# ԱՐԱՐԻԱԾ

Բեմը ներկայացնում է շքեղ կերպով սարբած սեղա-  
նատուն, բարձր պատռահների և ձմեռային չեր-  
մանոցի ապակիների միջով երեսւմ են մերկ եղեամ-  
նապատ ծառեր և ձեան հիւսեր: Մի անկիւնում վա-  
ղեմի բուխարի, մօտը՝ սոճի փայտի կտորներ, որ կա-  
զիմիլը բոպէ առ բոպէ ներարդային շարժաւմով զբ-  
ցում է կըակի մէջ: Բրօնկան պատուհանի մօտ ան-  
հանդիսա կերպով նայում է ձիւնախառն բռւք-բօ-  
րանին:

## 1 ԵՐԵՒԱՅԹ

Կազիմիր եւ Բրօնկա

ԿԱԶԻՄԻՐ. Ինչի՞ դու այդպէս անհանդստանում  
ես, երեխայութիւն մի անի: Ինչից ես վախենում:

ԲՐՈՆԿԱ. Ա'խ, Տէր-Աստուած, կազեա, չ՞ս տես-  
նում ինչպիսի թիփի է: Համարեա ամբողջ օրը թա-  
փում է հա թափում, ամբողջ հիւսեր է կազմել: Իսկ  
բաղաքից դուրս ճանապարհի շուրջը մի քանի վերստ  
տարածութեան վրայ ծառ չըկայ ամենակին: Եթէ յան-  
կարծ կառապանը ճանապարհը կորցնէ, սահնակը շրջի  
ու փոսն ընկնէ...

ԿԱԶԻՄԻՐ (լնդ՛ատելով): Դրանից ինչ: Թագէ-  
ուշը կընկնի փափուկ ձիւնի վրայ—ուրիշ ոչինչ:  
ԲՐՈՆԿԱ. Օ՛հ, ինչ անպիտանն իսչ..

ԿԱԶԻՄԻՐ. Դէ, մի բարկանար: Զարմանալի երե-  
խաներ էք երկուադ էլ: Զեր յարաբերութիւնները շատ  
անբնական են: Արդէն մի տարի է, որ ամուսնացած  
էք, բայց այնպիսի բնքշութիւններ էք անում, որ կար-  
ծես երէկ էք ծանօթացել:

ԲՐՈՆԿԱ. Հէսց այդ է գեղեցկացնում մեր կեանքը:  
ԿԱԶԻՄԻՐ. Ի հարկէ, ի հարկէ: Հապա խոստովա-  
նիր, սիրելի Բրօնկա, քանի՞ սիրահարական նամակ ես  
ստացել քո Թագեայից նրա մի շաբաթւայ բացակայու-  
թեան ընթացքում:

ԲՐՈՆԿԱ. Ա'խ, եթէ գիտենայիր, ինչպիսի՞ քաղցր  
նամակ է զրել նա ինձ, ինչպէս սիրում եմ ես նրա  
նամակները! Ոչ ոք չի կարող այդպիսի սքանչելի տողեր  
դրել!

ԿԱԶԻՄԻՐ. Բանը խօսքերի մէջ չէ: Բայց Թագէ-  
ուշը իսկ որ սիրում է քեզ: (Մ'տալսո՞): Այն, շատ  
սիրում է: Ես նախանձում եմ ձեր երջանկութեանը:  
(Փոքը լնդմիջումից յետոյ): Զեզ մօտ ես բոլորովին  
կընալւիմ: Ես աւելի ու աւելի՝ յաճախ երազում եմ մի  
իդիլիա սիրուած ու սիրող հնոջ հետ, որի մօտ ես կա-  
րողանայի աշխատել: Աւժասպառ արին ինձ այդ մըշ-  
տական թափառութերը մէկ տեղից՝ միւսը: Չէ՞ որ այդ  
բոլորը յիմարութիւն է: Արտիստական տպաւրութիւն-  
ներ, թանգարաններ, կրկէսներ, Խտալիա, Պարիզ—այդ

բոլորը յիմարութիւն է, յիմարութիւն, միայն ձանձրոյթ է պատճառում: Ամեն տեղ միենոյն է, և մարդ պարագ քարշ է գալիս անկիւնից անկիւն՝ հոգու մէջ կրելով միենոյն մշտական անձկութիւնը...

**ԲՐՈՆԿԱ.** Կազեա, կազեա, ի՞նչպէս տխուր ես դու! Այդպիսի անսահման անձկութիւն ես դեռ չեմ տեսել!

**ԿԱԶԻՄԻՐ.** Այս, այս:

**ԲՐՈՆԿԱ.** Այ, եթէ, կազեա, դու սիրահարէիր:

**ԿԱԶԻՄԻՐ.** Չըլինի, թէ քեզ վրայ: Ասենք, ես դրանից շատ հեռու էլ չեմ:

**ԲՐՈՆԿԱ.** (Կատակով): Յիմար, ի՞նչ կանէիր դու այնպիսի մի սովորական, հասարակ աղջկայ հետ, ի՞նչպիսին ես էի: Այդպիսի հասարակ աղջիկները քեզ յարմար չեն:

**ԿԱԶԻՄԻՐ.** (Հեղնութեամբ): Ընդհակառակը՝ ի՞նձ յարմար է հէնց այդպիսին: Ի՞նձ զգեցցը ել են այդ յիմար ու պարագ սիրամարգները՝ իրանց խառնւածքի և փորբիկ կրքերի անարւեստ խաղով համեմած չար ոգիների գերում. ես զգել եմ այդ ներշնչող հրեշտակներից, որոնք մարդու սիրան են խառնում. ես զգել եմ այդ ջադուներից, որոնք ճաղատ լեռան վրայ դատողութիւն են տալիս գիտութեան և հասարակական դործունէութեան մասին: Օ՛, հաւատա, ես սարսափելի յոգնել եմ այդ էպիփութիպիօններից, տղամարդու հոգու այդ մէծ ու փոքր նմանութիւններից: (Ծակատը շփելով եւ փայտի ծիլիկը նեարդօրէն նետելով բուխարու մէջ ման է զալիս սենեակում): Այս, ի՞նձ հարկաւոր է հէնց այդպիսի ոլարզ ու հասարակ, մաքուր և անարատ աղջիկ. այս... ամբողջ երեկոները կարճել նրա հետ միասին բուխարու առաջ, չար ու բարին չիմացող այդպիսի մի աղջկայ հետ, որի համար օտար լինի ամեն մի սկզբունք, տեսութիւն և բարոյագիտութիւն, ամեն մի իզմ, միայն թէ նա ամբողջովին լինի մի սիրտ, մաքուր ու ջերմագին սիրտ! Օ՛, այն ժամանակ կանհետանայ թէ անձկութիւն և թէ յիմարութիւն:

**ԲՐՈՆԿԱ.** Օ՛, որքան դու սխալում ես! Երկու օր քեզ կըզբաղցնէր այդպիսի հասարակ աղջիկը, իսկ յետոյ... թէ ի՞նչ—ի՞նքդ ասա:

**ԿԱԶԻՄԻՐ.** Դու այդպէս ես կարծում: Բայց տարօրինակ չէ, որ այդպիսի հասարակ աղջկայ հետ, ի՞նչպիսին դու քեզ համարում ես, ամբողջ օրեր խօսում եմ սրտագին, բաժանում եմ մտքերս և մի բոպէ անգամ ձանձրոյթ չեմ զգում. Ընդհակառակը՝ երբէք ես չեմ անցկացրել այդպիսի լաւ ու հաճելի օրեր, ի՞նչպէս այստեղ, եղբօրս տանը, քեզ հետ միասին: (Աշխոյժ կատակով): Գիտես, Բրօնկա, ես պիտի լուրջ սիրահարւեմ քեզ վրայ:

**ԲՐՈՆԿԱ.** (Նոյն տոնով): Եթէ այդ բոլորը դու չասէիր այդպիսի տխուր եղանակով և եթէ այդ միենոյն միջոցին չըմտածէիր բոլորովին այլ բաների մասին, ես կարող էի կասկածել, թէ ուզում ես թեթև ֆիեր սկսել ինձ հետ...

**ԿԱԶԻՄԻՐ.** (ծիծաղելով): Թէկուզ այդպէս լինի, իմ չընալ եւել ուուր: Փոխադարձ յուզմունքի այդպիսի անմեղ խաղը կարող է շատ հաճելի և հետաքըրքական լինել: Դա միենոյն է, թէ մարդ մի բաժակ հրեղէն ամօնտիլիադո խմէ:

**ԲՐՈՆԿԱ.** Ես ծարաւութիւն չեմ զգում դէպի այդ հրեղէն ամօնտիլիադօն: (Յրած մնքով): Բայց ի՞նչի՞ թաղէուշը այսքան երկար ուշցացաւ: Ասում եմ քեզ, կազեա, կառապանը, երկի, սահնակը շըջել ու փոսի մէջ է գցել:

**ԿԱԶԻՄԻՐ.** Այդպէս անհամբեր մի լինի, ձանապարհ ծանը է, ձիւնը խոր, ձիւրին հօ չըպիտի ձաքցնեն:

**ԲՐՈՆԿԱ.** Ասենք որ այդպէս: Բայց և այնպէս, կազեա, դու քո մելամաղձառութեամբ և ցրաշունչ տխրութեամբ այնպէս փչացնում ես մարդու տրամադրութիւնը, այնպէս ձնշում ես, որ... (Ընդհատումէ):

**ԿԱԶԻՄԻՐ.** Յետոյ ի՞նչ, ի՞նչ...

**ԲՐՈՆԿԱ.** Որ քիչ է մնում վազեմ ու արթնացնեմ եւային... Չեմ հասկանում, թէ ի՞նչի՞նա միշտ քնում է:

**ԿԱԶԻՄԻՐ.** Բայց կարելի է ընած չէ:

**ԲՐՈՆԿԱ.** Այդ գէպքում, նշանակում է, նա խուսափում է մեզանից:

**ԿԱԶԻՄԻՐ.** Ո՛չ, նա զգում է, որ՝ առանց իրան մեզ համար աւելի լաւ է:

**ԲՐՈՆԿԱ.** Անպիտան! Նա միշտ եղել է իմ ամենամօտ և ամենասկզեղ բարեկամը: Դու չես կարող երկակայել, թէ ի՞նչպէս բախտաւոր եմ զգում ի՞նձ, որ նա, վերջապէս, եկել է մեզ մօտ, երկու տարի էր, որ չէի տեսել: Բայց զիտես, կազեա, նա բոլորովին փոխւել է: Ես չըգիտեիր, թէ մարդկային բնութիւնը կարող է կարճ միջացում այդպէս փոխւել:

**ԿԱԶԻՄԻՐ.** Ի՞նչպէս է փոխւել:

**ԲՐՈՆԿԱ.** (Մի քիչ շփոթւած): Գիտես... մի ի՞նչ որ... պանսիօներունու ամօթիսածութիւն ի՞նձ խանգարում է այդ բանի մասին խօսել: Բայց քեզ կարելի է այդ բոլոր պատմել, դու կարծես թէ աղամարդ չես:

**ԿԱԶԻՄԻՐ.** Արգարացի նկատողութիւն: Դէ պատմիք օր, եւայի մասին, հետաքըրքական է:

**ԲՐՈՆԿԱ.** Գիտես, նա որք է և շատ հարուստ: Եւ նրա դժբախտութիւնը հէնց նրանումն է, որ կարողացել է բաւարարութիւն տալ իր ամեն մի քմահաճոյըն... Սակայն ես այդ չէի ուզում ասել: Մենք միա-

սին պանսիօնումն էինք, և մեզ կապում էր ինչոր տարօրինակ սէր: Նա խելագարի պէս էր սիրում ինձ, այնպէս որ նրա սէրը երբեմն ինձ համար լինում էր ծանր ու տանջալի: Նա ինձ համար կամ անվերջ բարի էր լինում, մի գառ, որի հետ ես կարող էի խաղալ, մի հնագանդ ստրկուհի, որ աչքերիս արտայայտութեամբ գուշակում էր միտքս, կամ յանկարծ նորից դառնում էր քմածին բռնակալ, նախանձայոյդ իմ ամեն մի մտքին, իմ սրտի ամեն մի բարախումին:

### ԿԱԶԻՄԻՐ. Յետոյ ի՞նչ:

ԲՐՈՆԿԱ. Խնամակալը իր ամուսնու մահից յետոյ, հանեց նրան պանսիօնից, և նա այդ ժամանակից դարձաւ իր կամքի, իր կարողութեան, իր մելամաղձութեան, կարելի է նաև անձկութեան լիակատար տիրուհին... Ահա, կաղեա, նա քեզ համար յարմար կին կը լինէր!

ԿԱԶԻՄԻՐ. Հըմ... Հըմ... Սակայն դու ոչինչ չասացիր նրանում կատարւած յանկարծակի փոփոխութեան մասին:

ԲՐՈՆԿԱ. Դէ տեսնում ես, տեսնում ես, ինչպէս ես ցրւած եմ, չեմ կարողանում մտքերս վերջացնել... (Մտածմոնքի մէջն է լնկնում): Բայց և այնպէս, չը նայած նրա բոլոր օտարութի վարմունքներին և քմահաճութիւններին՝ նա շատ ուրախ ու զւարթ էր և ամեն բանի մէջ մեր ամենիս զլխաւորն էր: Ամենքին և բոլորին նա կարողանում էր խարել, ծաղրել, իսկ հիմա... Ես չեմ կարողանում դեռ ինքս ինձ լաւ ողարդել, բայց զգում եմ, որ... տեսնում ես, կաղեա, ամաչում եմ խոստովանելու, որ մեր մէջ ինչոր պատւար է գոյացել... Ես չեմ կարողանում առաջւայ նման ազատ վերաբերել նրան և զգում եմ ինչոր անբացարելի զգացմունք, չը գիտեմ, երկիւղի, թէ սարսութի... Ա՛խ, ինչպէս նա գեղեցիկ է: Տեսել ես, ինչպէս նա գեղեցիկ է: Տեսել ես:

### ԿԱԶԻՄԻՐ. Լաւ չեմ նայել մինչև հիմա:

ԲՐՈՆԿԱ. Ա՛յ մարդ, միթէ դու կոյլ ես խկապէս դու աղամարդ չես:

### ԿԱԶԻՄԻՐ. Դու, կարելի է, իրաւացի ես: Բայց

քո հիւրը սկսում է իմ հետաքրքրութիւնը շարժել: Սակայն ինչին ես վերագրում դու այդ փոփոխութիւնը: Փշրւած սրտի, խարւած սիրո՞յ...

ԲՐՈՆԿԱ. Նա... Ոչ, այդպէս չէ, սիրելի կաղեա:

ԿԱԶԻՄԻՐ. Ինչպէս կարելի է պնդել այդպէս համոզւած կերպով:

ԲՐՈՆԿԱ. Որովհետեւ ես ճանաչում եմ այն բոլոր երիտասարդներին, որ շրջապատում էին նրան. գիտեմ, որ նա միայն խաղում էր նրանց հետ, և միակ մարդը, որ հետաքրքրում էր նրան, Թադէուշն էր. բայց ինչոր բան նրանց հեռու էր մղում միմեանցից:

ԿԱԶԻՄԻՐ. Ի՞նչպէս, Թադէուշը նրան ծանօթ էր: ԲՐՕՆԿԱ. Ի հարկէ, աւելի վաղ, քան թէ ինձ: ԿԱԶԻՄԻՐ. (Աշխոյժ կատակով): Եւ նրանք չըսկրահարւեցին միմեանց վրայ.

ԲՐՕՆԿԱ. (Յետ քաշւելով, կարծես ինչոր անախորժ ըսնից խայթած): Դու կարծում ես, թէ այն ժամանակ այսպէս անկեղծ և սրտագին կը հրաւիրէի նրան մեզ մօս, եթէ լիովին հաւատացած չըլինէի, որ նրանք օտար են եղել միմեանց համար:

ԿԱԶԻՄԻՐ. Երևի այդպէս է. չը որ ես լաւ ծանօթ չեմ կնոջ սրտի հետ:

ԲՐՕՆԿԱ. Ես միայն վախենում եմ անախորժութիւն պատճառել Թադէուշին նրանով, որ առանց իր գիտութեան՝ ես եւային հրաւիրել եմ մեզ մօս այսպէս անսպասելի կերպով: Դուցէ նա կուգէր իր վերագրածից յետոյ գէթ մի քանի օր միայն մեզ հետ լինել: Ինձ համար նա քրոջից էլ թանկ է, ես նրան չափից դուրս սիրում եմ, բայց Թադէուշի համար նա օտար է:

(Բակից լսում է սահնակի զանգակների ծայնը):

ԲՐՕՆԿԱ. (ցնծագին աղաղակով). Թադեան գալիս է, Թադեան գալիս է: Օհ, վերջապէս! (Դուրս է վազում ծախս դուխով):

## 2 ԵՐԵՒՑՅԹ

ԿԱԶԻՄԻՐ. (Նստած է եւ վշտագին նայում է Բրօնկայի յետեից՝ ըեխը նեարդորէն ոլորելով եւ բուխարու մէջ ճիղեր զցելով: Ապա յետ ու առաջ է զնում սենեալի մէջ: Կանգ է առնում, զլուխը ծեռքերի մէջ առնում եւ շշնջալով ատում): Այս, ուշ է, չափազանց ուշ է!

(Նստում, զլանակը վառում է, անտարբեր, մտախոն: Նախասենեալից լսում է Բրօնկայի ծայնը. «Եմ թանկագին Թադեա, իմ Թադեա»! Կազիմիրը յանկարծ ցնցում է:—Թադէուշի ծայնը. «Ա՛խ, ինչպէս կարօտել եմ քեզ! Կազիմիրի դէմքին նկատում է հիւանդագին ու անախորժ ժպիտ»):

## 3 ԵՐԵՒՑՅԹ

ԲՐՕՆԿԱ. Արի, արի, իմ սիրելի, ի՞նչպէս դու սառել ես—արի բուխարու մօս, տաքացիր:

ԹԱԴԻՍԻԾ. Բայց ես բոլորովին ցուրտ չեմ ըզգում, իմ թանկագին: (Բարեւում է Կազիմիրին): Հըմ, սիրելի կաղեա, լմա ես պահպանել իմ տունը: Բրօնկայի զլուխը չէս լցրել քո զրոյցներով մետաֆիզիկայի և արւեստի մասին:

ԿԱԶԻՄԻՐ. Այստեղ ես աշխատում էի Բրօնկային ընտելացնել այն մտքի հետ, թէ այլու չըպիտի բաժանւեմ ձեզանից:

**ԹԱԴԻՌԻՇ.** Ուրեմն այստեղ լաւ է քեզ համար, ԲՐՈՆԿԱ. Դէ, արի, Թագեա, արի բուխարու մօտ, դու բոլորովին սառել ես:

**ԹԱԴԻՌԻՇ.** Շատ ջնորհակալ եմ քո բուխարուց, բայց այսպիսի ցըտից յետոյ՝ ես աւելի շուտ մի որևէ բան կուտէի, շատ քաղցած եմ:

**ԲՐՈՆԿԱ.** Լաւ, լաւ, այս բոպէիս: (*Դուրս է վազում*):

#### 4 ԵՐԵՒՅՑԹ

**ԹԱԴԻՌԻՇ.** (*Ուրախ ու երջանիկ*): Հիմա որ, կազեա, ես գտայ երջանկութիւն ու հանգիստ: Երբէք ես չեմ համարձակւել նոյն իսկ մտածելու այսպիսի դրախտի մասին: Մինչև Բրօնկայի հետ պատահելը ես կարծում էի, թէ արդէն կորցրել եմ իմ բոլոր կենսական ուժերը. սիրաս չորացել էր ատշեղի պէս, հոգիս տանջւել էր, և մեր ցեղական սարսափելի անձկութիւնը արդէն սկսել էր համակել ինձ իր մղձաւանջով:

**ԿԱԶԻՄԻՇ.** Գիտեմ, զիտեմ, թէ որքան սարսափելի և անյուսալի դրութեան մէջ էիր գտնւում գուայն ժամանակ: Քո ամեն մի նամակը սարսափով էի բանում՝ վախենալով, թէ կը պատահեմ այսպիսի բառերի. «Մնաս բարով, սիրելի եղբայր, տխրութիւնը կրծելով մաշեց ինձ, և ես պատրաստում եմ փոխազդւելու յաւիտենականութեան ծոցը»: Իսկապէս այդ բանը չէր, որ վախենում էր ինձ, չէ որ անձկութիւնից ազատւելու միակ միջոցը այդ է. բայց և այնպէս անախորժ է այդպիսի նամակ ստանալը հարազատ եղրովից... (*Յանկարծօրէն*): Բայց ասա ինձ, ինչի՞ դու, որին ես յիշում եմ միշտ ուժեղ, կայտառ, կենսուրախ, յանկարծ ընկար այդ սարսափելի հոգեկան գժառութեան ձնշման աակ... իմ բանը ջոկ է, ես հէնց մանկութիւնից թթւած ու լալկան էի, իսկ դու, դու:

**ԹԱԴԻՌԻՇ.** Երկար կը լինէր պատմել դու էլ կը ձանձրանայիր լսելու այն դժոխային տանջանքների մասին, որոնց ես ենթակայ էի: Ես վաղուց փտած կը լինէի, եթէ չը հանդիպէի Բրօնկային:

**ԿԱԶԻՄԻՇ** (*Կարծես սկատանմամբ, միամտութեամբ*): Արդեօք կին չէ եղել գրա պատճառը:

**ԹԱԴԻՌԻՇ.** Եւ այն, և ոչ... Միթէ ես զիտեմ: Մի անբացատքելի տիրութիւն, ում համար և ինչի համար—չը զիտեմ:

**ԿԱԶԻՄԻՇ.** Այն կինը չար կամ թեթև վարքի տէր էր, արդեօք:

**ԹԱԴԻՌԻՇ.** Ո՛չ, ընդհակառակը: Նա միայն ապրելու ընդունակութիւնն էր կորցրել: Նա կեղեքում էր թէ իրան և թէ ուրիշներին: Նրան տիրել էր ոչնչացնելու մի ինչոր խելացնոր ծարաւ... Ա՛յս, որքան ես տանջուում էի!

**ԿԱԶԻՄԻՇ.** Յետոյ... ինչպէս եղաւ:

**ԹԱԴԻՌԻՇ.** Յետոյ... Հըմ... Նա ուզում էր ստըրկունել լինել, այն ինչ պիտի տիրապետէր: Ես շատ էի վախենում նրան կորցնելուց և նւաճել չէի կարողանում: Եւ ես արհամարհում էի ինքս ինձ, ատում էի թէ նրան և թէ ինձ: Բոլորը իդուր:

**ԿԱԶԻՄԻՇ.** Յետոյ...

**ԹԱԴԻՌԻՇ.** Վերջացաւ տխուր հեքեաթը:

**ԿԱԶԻՄԻՇ.** Եւ այն ժամանակից այլիս նրան չես պատահել:

**ԹԱԴԻՌԻՇ.** Վերջին աեղեկութիւնը իր մասիննա ինձ հասցը է հարսանիքիս օրը: Ես նրանից ստացայ մի այնպիսի անկեղծ և սրտագին նամակ, որ մոռացայ առաջւայ բոլոր վիրաւորանքները:

**ԿԱԶԻՄԻՇ.** Բայց, կարելի է, զա եղել է միայն կանացի չար և վրիժառու նենդութիւն:

**ԹԱԴԻՌԻՇ.** Օ՛, ոչ! Նա Բրօնկայի ընկերունին էր, բուռն կերպով սիրում էր նրան և իսկապէս ուրախ էր, որ Բրօնկան ամուսնանում է մի մարդու հետ, որին նա, ինչպէս ինքը գրում էր, ամենալաւ գէպքում պիտի դժբախտացնէր:

**ԿԱԶԻՄԻՇ.** (*Քննողական ծերով*): Եւ դու նրան այլիս չես տեսել:

**ԹԱԴԻՌԻՇ.** Ո՛չ:

**ԿԱԶԻՄԻՇ.** Եւ երբէք նրա մտախն չես մտածում:

**ԹԱԴԻՌԻՇ.** Ո՛չ: Իմ սրտում և զվարում տեղ կայ միայն Բրօնկայի համար:

**ԿԱԶԻՄԻՇ.** Իսկ եթէ նրան յանկարծակի պատահէրի:

**ԹԱԴԻՌԻՇ.** Եթէ պատահէի: Ո՛չ... Նա ինձ վրայ ամենափոք տպաւորութիւն անգամ չէր անիլ: Դէպի նա ունեցած սէրս վաղուց մոխիր է գարձել... Իսկապէս չը զիտեմ էլ: թէ նա սէր էր արդեօք: Գուցէ նա խայթւած ինքնասիրութիւն էր մի մարդու, որ մինչեւ այդ ժամանակ իր առաջ ոչ մի արգելքը չը զիտէր և կատաղում էր, որ անկարող է տիրապետել իր ցանկացած կնոջը: Աւելացրու զրա վրայ նուե ամօթի զգացմունքը, անվասանութիւնը, չըբաւարարւած ցանկութիւնները և դու կունենաս իմ հոգեկան զրութեան ձշքիտ պատկերը: (*Վեր է կենում եւ ման է զալիս սենեակում*): Եթէ պատահէի... անսպասելի կերպով. . հըմ... կարելի է այնտեղ, հոգուս խորքում, որ և է բան ցնցւէր...

**ԿԱԶԻՄԻՇ.** Դու, կարծես, շատ էլ վստահ չես քեզ վրայ:

**ԹԱԴԻՌԻՇ.** Եթէ Բրօնկան ինձ հետ չըլինէր, ես իմ ուժեղ, եռանդուն ընաւորութեամբ չէի կարող ինձ լաւ զգալ միջնադարեան ցըտաշունչ և մայլ պատերի

մէջ, որտեղ միայն նա կարողանում էր ապրել: Գիշերը այստեղ սարսափելի էր լինում: Այստեղ ապաստանում էին ուրբականներ, մղձաւանջներ: Եռանգս հալում էր, ինչպէս մոմը կրակի վրայ: Եւ մի ինչ-որ անիծւած մելամզգութիւն լափում էր իմ ոսկորների ծուծը: Բայց նայիր. իմ ճակատը ստեղծւած է արեգակի ճառագայթների համար. իմ ձեռքերը ստեղծւած են, եթէ պէտք լինի, մարտնչելու: (Ուղղում է հուժկու ու կորովի. յանկարծ բարձր ծիծաղով սկսում է ծափանարել): Հէյ, ուր ես, Բրօնկա, ուր ես:

**ԲՐՈՆԿԱ.** (Բեմի յետելից). Այս ըոպէխս, այս ըոպէխս!

**ԿԱԶԻՄԻՐ.** Բայց դու որտեղ ծանօթացար Բրօնկայի հետ:

**ԹԱԴԻԾՈՒՅՇ.** Մեր քեռու մօտ: Ես նրան պատահեցի անտառում, ձի հեծած. նրա ձին ինչ-որ բանից խրանել էր ու սլացել: Նայում ու զարմանում եմ այդպիսի խելացնոր ծիարշաւի վրայ. յետոյ հասկացայ, որ ամազօնը չէր ուզում այդպիսի արշաւանք, թէև արիաբար մնում էր ձիու վրայ! Թէ ինչպէս ձիուն կանգնեցրի, այդ ես էլ չըգիտեմ: Այդ արկածից յետոյ ես հիւանդացայ, մօտ երկու շաբաթ անկողնումն էի, բայց գրա փոխարէն Բրօնկային ձեռք բերի և հանգստութիւն ու երջանկութիւն գտայ:

**ԿԱԶԻՄԻՐ** (հեղնական ժպիտով): Հետաքըրսական արկած է:

**ԹԱԴԻԾՈՒՅՇ.** Այս, հետաքըրսական է: Այնքան հետաքըրսական, որ մինչեւ այդ ժամանակ, երբ այդպիսի արկածների մասին կարգում էի վէպերում,—իսկ վէպեր երբեմն կարգում էի ձանձրութիւնից—երբէք չէր կարող կարծել, որ նման դէպէր կարող են կեանքի մէջ էլ պատահել:

## 5 ԵՐԵՒՈՅՑԹ

Ներս է վազում Բրօնկան, իսկ նրա յետելից սպասաւրը՝ ձեռին մատուցարան, որի վրայ տեղատրած են կերակուլներ եւ իմիշըների շիշեր:

**ԲՐՈՆԿԱ.** (Գորգուրանքով հակելով թաղէուշին շոյում է նրա երեսը): Ո՞քան դուն անհամեր ես: Զէ ո՞ր ուզում էի ինքս անձամբ այդ բոլորը պատրաստել քեզ համար:

**ԹԱԴԻԾՈՒՅՇ.** Բայց ինչի այսպէս շատ:

**ԲՐՈՆԿԱ.** Մինչև ընթրելը դեռ շատ ժամանակ կայ, կեր, կեր:

**ԹԱԴԻԾՈՒՅՇ.** (Օղի է լցնում ու խմում) Երեսը դարձնելով դէպի կազմելիրը. ապա սկսում է ոտել եւ խօսել՝ ծամելով): Այ թէ բուք ու բօրան է, ոչինչ չի երեռմ, ձեան հիւսը մինչեւ գօտին է հասնում:

**ԲՐՈՆԿԱ.** Ա՞խ, ինչպէս անհանգիստ էի քո մասին:

**ԿԱԶԻՄԻՐ** (կատակով): Օ՛, սրան թւում էր, թէ դու սարսափելի տանջանքներ ես կրում շըջւած սահնակի տակ:

**ԹԱԴԻԾՈՒՅՇ** (զրկելով Բրօնկայի զլուխը): Օ՛չ, դու անուղղելի երեխայ, մի բայլ անգամ չի կարելի քեզանից հեռանալ:

**ԲՐՈՆԿԱ.** Որովհետե գիտեմ, որ ինձ մօտ քեզ հետ ոչ մի վատ բան չի կարող պատահել:

**ԹԱԴԻԾՈՒՅՇ** (յանկարծ վեր ցատկելով տեղից), Զարմանալի բան. իմ յիշողութիւնը հաւի յիշողութիւնը էլ կարճացել է: Իսկոյն կը վերադառնամ, իսկոյն: (Գնում է դէպի դուռը):

**ԲՐՈՆԿԱ.** Ո՞ւր ես գնում:

**ԹԱԴԻԾՈՒՅՇ**: Իսկոյն, իսկոյն, սիրելիս! Սա մի սիւրպիդ է: (Անհետանում է նախասենեակում):

(Բեմի ետելից լսում է թաղէուշի ձայնը. «Պաւը, Պաւը!»):

## 6. ԵՐԵՒՈՅՑԹ

**ԲՐՈՆԿԱ** (մանկական ուրախութեամբ): Երկի, էլի որևէ մի անսպասելի թանկագին ընծայ է! Ես, ձմարիտն ասած, պիտի բարկանամ նրա վրայ. ես աւելի՝ քան պէտք չ'ունիմ թաւիշ, մետաքս ու թանգագին գործւածքների, որ նա առատօրէն թափում է իմ շուրջը:

**ԿԱԶԻՄԻՐ**: Նա քեզ սիրում է, իսկ սիրող տղամարդու համար մեծ բաւականութիւն է անակնկալ կերպով ընծաներ տալը. բայց դու էլ, Բրօնկա, նրան սիւրպիդ ես արել: Ես միայն մտածում եմ, թէ նրան դուր կը մյ արդեօք, բո սիւրպիդզը: Թաղէուշը հիմա այնպէս երջանիկ է, իսկ երկու հոգու փոխադարձ երշանկութիւնը նախանձայոյզ ու հսական է լինում: Երբիմն հէնց ինքս վախենում եմ ձեզ խանդարել, ուր մաց մի կին, որը, ինչպէս դու ասում ես, բոլորպին օտար է թաղէուշի համար...

**ԲՐՈՆԿԱ** (եռանդով): Ո՞չ... ոչ... ի հարկէ ոչ: Հէնց դրա մէջ է կայանում մեր կանացի ամբողջ խորամանկութիւնը. եթէ կինը ուզում է տղամարդուն աւելի ամուր կապել իր հետ, ժամանակ առ ժամանակ նրան հեռացնում է իրանից, լիակատար ազատութիւն է տալիս նրան: Ո՞չ, ես չեմ սխալւել, չեմ: Մենք եւայի հետ կը զբաղւենք ընթերցանութեամբ, խաղերով, իսկ նա թնդ որսի զնայ, այցելէ հարկաններին, սակարէ հըէաների հետ հացի՝ գների մասին և կարօտած վերադառնայ ինձ մօտ:

**ԿԱԶԻՄԻՐ** (տիրագին հեղնութեամբ): Ես չէի կարծում, որ դու այդպիսի նուրբ քաղաքադէտ ես:

**ԲՐՈՆԿԱ.** (ծիծաղելով): Սա ոչ թէ քաղաքականութիւն է, այլ մեր մայրերի և տատերի փորձն է:

**ԿԱԶԻՄԻՐ:** Լաւ, լաւ. ես միայն վախճնում եմ թէ մի գուցէ Թաղէուշի այսօրւայ տրամադրութիւնը փչանայ որևէ բանով: Ես այնպէս սիրում եմ տեսնել նրանում իր վրայ վստահ մարդու այդ ոյժը և հաւասարակութիւնը, որ նա ձեռք է բերել քո շնորհիւ:

**ԲՐՈՆԿԱ.** Թաղէուշի վերաբերմամբ մի վախենայ: Միայն դու այս ամրող երեկոն այդպէս մի մանգայ մուայլ դէմքով և իմ տրամադրութիւնն էլ մի փչացնի: Շուտով ներողութիւն խնդրիր ու ձեռս համբուրիր:

**ԿԱԶԻՄԻՐ** (քոնոմ է նրա ձեռքերը և ընաւրութիւնը նաև նրա աշքերին):

**ԲՐՈՆԿԱ.** Դա ինչ է նշանակում:

**ԿԱԶԻՄԻՐ:** Ոչինչ, ես միայն քո բարի, նազելի, տաքուկ ու մանկական ձեռքը բռնելու պերճանքն եմ թոյլ տալիս ինձ: Կարծես ինչոր բան հալւում է իմ սրտի մօտ: (Համբուրում է նրա ձեռքը):

**ԲՐՈՆԿԱ.** (Նրա վրայ երկար հայեացը ձգելով): Դու, կազեա, յիրաւի այնպէս տխուր ու յոգնած ես երեսում:

**ԿԱԶԻՄԻՐ:** Միշտ այդպէս է լինում, եթէ մարդ Թաղէուշի պէս բաղդաւոր չի լինում ծնւած:

## 7. ԵՐԵՒԱՑՅՈՒՅԹ

Ներս է մտնում Թաղէուշը եւ թանկագին մետաքսիայ շալը փոռում թրծնկայի ոտների առաջ.

**ԹԱՂԻՖՈՒԾ:** Այս շալը ես մտադիր էի փոելու քո ձանապարհն, սահնակից մինչև շեմքը, երբ մի քանի ըոպէ առաջ դուրս վազեցիր ինձ դիմաւորելու: Բայց յիմարի պէս այս հրաշալի գործւածքը կոխել էի սահնակի նատարանի տակը ու մոռացել:

**ԲՐՈՆԿԱ.** (Փարւելով նրա պարանոցին): Իմ ոսկեայ, իմ սիրելի, իմ անուղղելի վատնող!

**ԿԱԶԻՄԻՐ** (մի ըոպէի շափ նայում է նրանց վրայ, ապա վեր է կենում): Չեզ թողնեմ այստեղ ձեր երջանկութեամբ միասին ու գնամ այդ ժամանակամիջոցում մի զոյգ նամակներ գրելու: (Բրոնկային): Իսկ ընթրիքի ժամանակ, այդ խորհրդաւոր հանդիսին, կը հրամայես ֆրակով ներկայանալու:

**ԲՐՈՆԿԱ:** Ի հարկէ, միթէ կը համարձակէիր ու ըիշ կերպ երեալ իմ աշքին!

**ԿԱԶԻՄԻՐ:** Ուրեմն ց' տեսութիւն! (Դնում է դէպի դրուք. մի ըոպէ կանգ է առնում պատունակի մօտ): Թիմելով Թաղէ պէտք է այս ձիւնը դադարէ! (Թիմելով Թաղէ պէտչին): Որքան երջանիկ ես, Թաղէուշ, որ այս ձիւ-

նը չի կարողանում ճնշել, մռայլեցնել քո հոգին: Դուքս է զնուում:

## 8. ԵՐԵՒԱՑՅՈՒՅԹ

**ԲՐՈՆԿԱ.** (Նայելով Կազիմիրի յետելից): Ի՞նչ է պատահել Կաղեայի հետ: Նա այնպէս տարօրինակ կերպով տխուր ու մտախոհ է:

**ԹԱՂԻՖՈՒԾ:** Դու նրա ներկայութեամբ լաւ չես զգում քեզ: Դու գեռ չես ընտելացել նրան:

**ԲՐՈՆԿԱ:** Ընդհակառակը՝ ես ինձ լաւ եմ զգում նրա մօտ: Նա ներգործում է, ինչպէս աշնանային ոչ պայծառ, բայց շոյող արեգակ: Ժամանակը նրա հետ, թէկ մի քիչ տխուր, բայց լաւ ու հանգիստ է անցնում:

**ԹԱՂԻՖՈՒԾ:** Այս, դա ճշմարիտ է: Դէպի կորուստ է զնում մեր տոհմը: Ես ու նա վերջին թոյլ բողբոցն ենք մեր երբեմնի ամուր ու հզօր տոհմական ծառի հինաւուրց բնի վրայ:

**ԲՐՈՆԿԱ:** Ի դէմս Կազիմիրի ձեր տոհմը դէպի կորուստ է գնում, բայց քեզանով՝ ոչ: Այս ինչպէս դու հուժկու ու հզօր ես, ինչպիսի երջանկութիւն և ոյժ է արտայատում քո դէմքը!

**ԹԱՂԻՖՈՒԾ** (զրկում է նրան, տանում բուխարում մօտ եւ նստեցնում իր մօտը): Այդ քո սէրը, քո սէրն է ինձ այսպիսի ոյժ և զօրութիւն տւել:

**ԲՐՈՆԿԱ:** Իսկ քո աշքերը կամ բոցավառ ու գոլիսմած ածուխի են նմանում— կարծես դու ուզում ես ամբողջ աշխարհը ընդգրկել, կամ շոյիչ ու բարի (Նրա զլուկը սեղմում է կրծքին եւ աշքերից համբուրում), որ ես կարողանամ համբուրել նրանց, համբուրել անվերջ ու անհաշիւ:

**ԹԱՂԻՖՈՒԾ** (զլուկը զնում է նրա կրծքին): Դու իմ միակ երջանկութիւնն ես, ինչպէս սիրում եմ քո այդ գեղեցիկ սէրը:

**ԲՐՈՆԿԱ.** (Խաղալով նրա մազերի հետ): Այս, ինչպիսի հրաշալի ու քնքոյշ մազեր ունիս: Ինձ այնպէս է թւում, թէ ես դիպչում եմ ոչ թէ մազերի, այլ ինչոր անսահման փափուկ ու թաւ խոտի... Գիտես, իմ հօր տան առաջը գտնուզ ծաղկանոցում այդպիսի շենք ու թաւ խոտ կայ, զու չես հաւատալ, թէ ինչպիսի բաւականութիւն, ինչպիսի պերճանք էր ինձ համար թաւալւել նրա մէջ... Ահա այդպէս կըցանկայի ընկղմել նաև քո մազերի մէջ: (Համբուրում է նրա մազերը):

**ԹԱՂԻՖՈՒԾ:** Բայց յիշում ես, ինչպէս ձիդ խըստակ էր քո հեծած ժամանակ:

**ԲՐՈՆԿԱ:** Օ՛ դա մի մահացու սարսափ էր! Ես գիտակցութիւնս կորցրել էի, բայց միկնոյն ժամանակ

որպիսիք բաւականութիւն էի ստանում, որ սլանում եմ այդպիսի հզօր, անզուսով, հպարտ և գեղեցիկ կենդանու վրայ:

**ԹԱԴԻՌԻՇ:** Իսկ յիշում ես, որ ես քեզ գրկեցի ահա այսպէս ու կրծքիս սեղմած ման էի ածում սենեակի միջով: (Նրան զնում՝ է իր ծնկների վրայ. Բրօնկան՝ նստած Թաղէուշի ծնկներին՝ փարտում է նրա պարանոցին):

**ԲՐՈՆԿԱ:** Իմ անզուգական! Ասում են, սովորութիւն կայ, որ ջահել աղջիկը եկեղեցու սեղանի առաջ, պատկերու ժամանակ, պիտի լայ, բայց ես չըլացի. ես ուզում էի ճշալ երջանկութիւնից և հրճւանքից, ճշալ ուրախութիւնից, որ շուտով, շուտով մի զոյտ կատաղի ձիեր կը սլացնեն մեզ սահնակի մէջ դէպի քո տունը:

**ԹԱԴԻՌԻՇ:** Յիշում ես դու այն յունտարեան պարզ գեշերը. աստղերը շողում էին, սառած ձիւնը պեծին էր տալիս, իսկ փրփուրով ծածկւած ձիերը, կարծես թե առած, սլանում էին (Աւելի ու աւելի ամուր է զրկում նրան):

**ԲՐՈՆԿԱ:** Ո՞հ, սեղմիր ինձ կրծքիդ, այնպէս, ինչպէս այն ժամանակ, երբ դու ինձ ամբողջովին փաթաթել էիր քո գայլէնի մուշտակի մէջ: (Յանկարծ յետ է քաշում նրանից): Բայց ասա, ինչի, երբ մօտեցանք տանը, քո աչքերի մէջ փայլեց այնպիսի պողպատեայդնդակ հայրացք:

**ԹԱԴԻՌԻՇ:** Ես խաչ էի դնում իմ անցեալի վրայ: ԲՐՈՆԿԱ, ինչպիսի անցեալ ես ունեցել դու:

**ԹԱԴԻՌԻՇ:** Ինչպիսի անցեալ... Օ՛, տիրութեամբ հարուստ անցեալ... Տանջանքների և ցաւերի մի ամբողջ գոլգոթա, ներքին պայքարի մի ամբողջ գեհեն, խռովայոյզ անկում, յուսահատութիւն, ատելութիւն դէպի ինքս ինձ և դէպի ողջ աշխարհն...

**ԲՐՈՆԿԱ:** Դու սիրահարւել ես երեսէ:

**ԹԱԴԻՌԻՇ:** Միթէ ես գիտեմ, սէր էր նա արդեօք... Կարելի է ինձ միայն թւում էր, թէ ես սիրում եմ. ես չեմ ուզում տեսականօրէն վերլուծել, թէ սրը սէր է և սրը սէր չէ. բայց ինձ թւում է թէ սիրոյ մէջ պէտք է հպարտութիւն լինի, արքայական վատահութիւն դէպի ինքն իրան և դէպի այն անձը, որին սիրում ես. իսկ այդ վատահութիւնը ես միայն քեզանով ձեռք բերի:

**ԲՐՈՆԿԱ (շոյելով նրան):** Թաղեա, անկեղծ եղիր. ես այսօր կաղիմիրի հետ երկար խօսեցել իմ եւայի մասին:

**ԹԱԴԻՌԻՇ:** (զարմացած, թեթեսակի յօնքերը կլիտելով): Եւայի մասին:

**ԲՐՈՆԿԱ:** Այս, եւայի մասին. ինչի այդպէս յօնքերդ կախեցիր, իմ հրամանատար:

**ԹԱԴԻՌԻՇ:** Ո՞չ, ես միայն յիշեցի, որ մեր հարանիքից յետոյ, մեր ամուսնական կեանքի հէնց առաջին օրերում, դու ուզում էիր նրա մօտ պարծենալ մեր երջանկութեամբ. իսկ ես ոչինչ չեմ ուզում, միայն ապրել քեզ հետ, միմիայն քեզ հետ, որովհետեւ սիրոյ երջանկութիւնը արտասովոր զգայուն է, և նրան կարող է խանգարել որևէ չնչին, աննշան բան...

**ԲՐՈՆԿԱ (վախիեցած):** Ի՞նչ բան:

**ԹԱԴԻՌԻՇ:** Հանգիստ ու տիսուր կազիմիրը, ինչպէս դու ճիշտ նկատեցիր, աշնան արեգակի նման մեղմ ու լաւ է ազգում. իսկ նա նման է ըստ երեսյթին միայն հանգած հրաբուղիսի, որից սակայն իւրաքանչիւր բողէ կարող է լաւայ դուրս ժայթքել...

**ԲՐՈՆԿԱ:** Ո՞րտեղից ես դու նրան այդպէս լաւ ճանաչում:

**ԹԱԴԻՌԻՇ:** Ո՞րտեղից: Դու գիտես, որ ես նրան յաճախ պատահած եմ, և նա ինձ հետաքրքրել է, ինչպէս կազիմիրին՝ որևէ մի նոր պատկեր կամ հասարակածային որևէ բոյսի, ծաղկի կամ կենդանու տեսակը:

**ԲՐՈՆԿԱ (երկշոտութեամբ եւ վախիեցած):** Թագեա, Թագեա:

**ԹԱԴԻՌԻՇ (ապշած):** Բայց ի՞նչ կայ, իմ մանուկ, ի՞նչ:

**ԲՐՈՆԿԱ:** Գիտես դու, ես լսել եմ, որ սէրը թուլանում է մշտապէս մօտիկ լինելուց և անբաժան հաղորդութիւն ունենալուց, որ հարկաւոր է ժամանակաւոր անջատում, հարկաւոր է երբեմնակի միմեանց ազատութիւն տալ, որ սէրը թարմանայ, և նրա յարաւանութիւնը պահպանւի, որ սիրողները՝ կարօտելով միմեանց՝ նորից փափազին մօտենալու... Զը գիտեմ, թէ ի՞նչը ինձ դրդեց այնպէս մտածելու, բայց ես կը ցանկայի, որ դու որսի գնայիր, այցելէիր հարկաններիդ... Միևնոյն ժամանակ ես չէի կարող ամբողջ օրերով մենակ նստել ու սպասել քեզ:

## 9 ԵՐԵՒՈՅՑԹ

Դուն վարագոյրը յետ է քաշում, եւ կողքի սենեակի չէմբում երեսում է Եւան, որը խիստ զունասու ու թազգրած տիրութեամբ նայում է Թաղէուշին ու Բրօնկային. Որոնք նստած լինելով բուխարու մօտ՝ չեն տեսնում նրան:

**ԲՐՈՆԿԱ:** Իրաւացին եմ, Թաղէ: Ասա այդպէս է: **ԹԱԴԻՌԻՇ:** Բայց սիրելի մանուկ, որտեղից են այդպիսի մտքեր գալիս քո զլուխը: Մարդ կարող է մի տարւայ ամուսնութիւնից յետոյ կնոջը աւելի սիրել ու աւելի կարօտել, քան ես:

**ԲՐՈՆԿԱ:** Թաղէ, քո նամակները, քո սէր չնչող,  
թանկագին նամակները... իսկ վերջինը, որ այնքան  
գեղեցիկ է, և դեռ կրում եմ կրծքիս վրայ (կօրսաժի  
ծոցից հանում է նամակը եւ չերմագին համբուրում):

**ԵՒԱ.** (մի բոպէով ծածկում է ձմեռային պար-  
տէզ ներկայացնող կից սենեակի դրան վարագոյրի  
յիտելը, այնտեղ անցուղարձ է անում նետրդային  
անհանգստութեամբ: Յանկարծ խօսում է): Ես ձայ-  
ներ եմ լսում սենեակում. ձեր գորգերը չափազանց  
փափուկ են, և դուք չէք լսում իմ քայլերը...

**ԹԱԴԵՌԻԾ:** (վեր ցատկելով տեղից): Ի՞նչ է այս.  
ԵՒԱ: Կալելի՞ է ներս գալ:

**ԲՐՈՆԿԱ:** Թաղեա, ի՞նչ պատահեց քեզ: (Երկար  
հայեացը ճգելով նրա վրայ՝ զնում է դէսի դուռը):  
Ներս արի, ներս արի, եւա, ներս արի... Այս, ի՞նչ-  
պէս Թաղէուշը պիտի ուրախանայ, որ եկել ես! (Հայն  
քացում է դրան վարագոյրը. Թաղէուշը այնպէս է  
նայում, կարծես քնի մէջ լինի. Եւան ներս է զայիս  
եւ միաժամանակ իջնում է վարագոյրը:)

## II ԱՐԱՐԻԱԾ.

Նոյն սենեակը, Չմեռալին երսկութի մթնշահ:  
Դուրսը, պատոհանի միւս կողմը, պեծին է տա-  
լիս ձիւնի ծերմակ սփոռոցը, բուխարու մէջը կրակ:  
Բեմը մի բոպէի չափ դատարկ է: Մի բոպէից յե-  
տոյ ներս են մտնում Թաղէուշն ու Եւան:

### 1 ԵՐԵՒԱՅԹ

**ԵՒԱ.** (Մօու է վազում բուխարուն եւստրացնում  
է ձեռքերը): Օ՛հ, ի՞նչպէս մրսում եմ, ի՞նչպէս ցնւրտ է.  
Իսկ ինձ թւում էր, թէ ձեզ մօտ կը տաքանամ:

**ԹԱԴԵՌԻԾ:** Դու ոչ մի տեղ չես տաքանալ:

**ԵՒԱ:** Ի՞նչպէս: Ես հենց դրա համար եմ եկել, որ  
ձեր երջանկութեան ճառագայթներով տաքացնեմ իմ  
սիրտը:

**ԹԱԴԵՌԻԾ:** (Հեղնօրէն): Նախ քան տաքացնելը  
պէտք է ունենալ այն ինչ որ ուզում ես տաքացնել:  
ԵՒԱ. (Արկարացնելով): Համամ:

**ԹԱԴԵՌԻԾ:** Ի հարկէ: Սակայն թողնենք այդ  
քանը: Մեր զբոսանքի ընթացքում (Նայելով ժամա-  
ցոյցին), ամբողջ երեք ժամ, կարծեմ մենք բաւական  
հաճոյախոսութիւններ արինք միմեանց. ժամանակ է  
խօսակցութիւնը փոխելու. աւելի լաւ է ուրիշ բանի  
մասին սկսենք խօսել:

**ԵՒԱ:** Դու սկսիր... Բայց սկզբից առաջ կրակ  
վառեն... Մթընշաղը, բուխարու մելամաղձու կրա-

կը... Պեծին տւող ձիւնի փայլը պատուհանի առաջ,  
փափուկ գորգերը, վարագոյրները... հա...հա... այդ  
բոլորը անվանագ չէ... այդ բոլորը յուզում, ցանկու-  
թիւններ է արթնացնում... (մտախոհ նայում է շուր-  
ջը): Դու ի՞նք ես զարդարել այս սենեակը:

**ԹԱԴԵՌԻԾ:** Ես ի՞նքս:

**ԵՒԱ:** Պարզ հաշիւ տալով ի՞նքդ քեզ:

**ԹԱԴԵՌԻԾ:** Պարզ:

**ԵՒԱ:** Բայց գիտե՞ս, որ քո բնակարանը իմի պատ-  
ճէնն է:

**ԹԱԴԵՌԻԾ:** Գիտեմ:

**ԵՒԱ:** Ի՞նչի՞ համար ես այդպէս արել:

**ԹԱԴԵՌԻԾ:** Ինքս ինձ փորձելու համար, որ հա-  
մուկեմ, թէ արդէն հանգստացել եմ, մոռացը իմ  
մէջ այն մղձաւանջը:

**ԵՒԱ.** (Ճաղրով): Եւ հենց դրա համար էլ քո աշ-  
խատելու սենեակում կախել ես իմնկարած և քեզ ըն-  
ծայած պատկերը:

**ԹԱԴԵՌԻԾ:** Դու եղելես իմ սենեակում:

**ԵՒԱ:** Քո եկած օրւայ ամբողջ նախորդ գիշերը:

**ԹԱԴԵՌԻԾ:** Ի՞նչ էիր անում այնտեղ:

**ԵՒԱ:** Ի՞նչ էի անում... Ես երջանիկ էի քո գէպի  
ինձ ունեցած սիրով և անձկութեամբ:

**ԹԱԴԵՌԻԾ:** Այս անգամ դու շատ սխալում ես:

**ԵՒԱ:** Ոչ, ոչ ես չեմ սխալում: Քո աշխատելու  
սենեակը աւելի նման է տաճարի, որտեղ դու ամբողջ  
ժամերով անջատում ես քո երջանկութիւնից, քո տա-  
րուկ անկիւնից, Բրոնկայի մարզան շրթունքներից, որ  
այնտեղ սիրտդ կեղեքնս, տիլես նրա համար, որը քեզ  
հրաշալի բերկրանք է պատճառում. բոլոր ուժերով ցան-  
կաս նրան, որը բորբոքում է քո արիւնը: Օ՛, ցանկալ  
ու տիլես, տիլելի...

**ԹԱԴԵՌԻԾ:** Ի՞նչի՞ համար:

**ԵՒԱ:** Նրա համար, որը քեզ պատճառում է ցաւ  
և չըբաւարարւած ցանկութիւն: Դու ծնւել ես մարտն-  
չելու, դու մի ժամանակ երազում էիր առաջնորդ լի-  
նելու, նոր աշխարհներ ստեղծելու. կանդ առնելու մի-  
այն նրա համար, որ դիակների և ծխացող աւերակնե-  
րի մէջ՝ գլխիցդ վերցնելով սաղաւարտդ՝ քրտինքդ սըր-  
բես բորբոքւած ճակատիցդ... Քեզ համար չեն այս  
տաքուկ անկիւնները, փափուկ գորգերը, ախորժելի  
բուխարիները. զբանք քո եղբօր համար են, որի հո-  
գին արդէն այրել, մոխիր է զարձել...

**ԹԱԴԵՌԻԾ:** (Ալջօրէն նայելով նրան): Ամենից ա-  
ռաջ ասա ի՞նչի՞ համար ես եկել, կարծում եմ, որ դու  
այնպիսի չար նպատակ չես ունենալ, որ փշրես երկու-  
սիս երջանկութիւնը և յատկապէս այն մարդու բաղդը,

որին դու միանգամ արդէն քիչ էր մնացել կորստեան մատնէիր:

ԵՒԱ. (թեթեւամիտ կերպով ծիծաղելով): Քիչ էր մնացել! Ինչպէս ափսոսում եմ, որ այնպէս շուտով քեզ բաց թողի ձեռից:

ԹԱԴէՌԻԾՈՒՅՆ: Ոչ թէ դու բաց թողիր, այլ ես ինքս դուրս պըծայ:

ԵՒԱ. (մոտախոհ կերպով անշարժ նայում է կրակին): Այն, ճիշտ է, ես այն ժամանակ զարմացայ քո կամքի վրայ և սիրեցի քեզ...

ԹԱԴէՌԻԾՈՒՅՆ (հեղորէն ժպտալով): Գիտեմ, գիտեմ: Բայց սպասիր, դու միշտ ընդհատում ես ինձ: Պատասխանիր, վերջապէս, իմ հարցին, ինչի՞ ես դու եկել:

ԵՒԱ: Միթէ դու չը գիտես, որ Բրօնկան է թախանձագին խնդրել, որ գամ: Նա նոյն իսկ մի անմեղ սուտ էր հսարել, որ ինձ քաշէ, բերէ այստեղ. զրի էր, թէ հիւանդ է:

ԹԱԴէՌԻԾՈՒՅՆ: Դու չը պիտի գայիր:

ԵՒԱ. (զարմացած): Բայց ինչի՞: Զէ՞ որ դու միշտ կանչում էիր ինձ, միշտ ինձ համար էիր տիրում!

ԹԱԴէՌԻԾՈՒՅՆ: Ես տիրել եմ քեզ համար, կանչըլ եմ քեզ: Ես բոլորովին մոռացել իմ քո մասին:

ԵՒԱ. (տիրութեամբ), Դու ինձ չես մոռացել: Քո ամբողջ տունը ինձանով է շնչում: Հինց որ ես քո տան շէմքը անցայ, ինձ թւաց, թէ սա իմ տունն է, որ ես անբաժան թագաւորում եմ նրանում, որ ես միայնակ ինձանով ամբողջովին լցնում եմ նրան:

ԹԱԴէՌԻԾՈՒՅՆ: Հա... հա... դու այդպէս ես մտածում հիմնելով կարասիքի վրայ: Ես քեզ աւելին կասեմ. ես գիտմամբ աշխատել եմ նմանեցնել քո սենեկաներին. գիտես, երբ արբեցողը, օրինակ, օդի խըմբու սովորութիւնը թողնում է և ուզում է փորձել, իմանալ, թէ իսկապէս նա այդ սովորութիւնը թողել է, թէ ոչ, նա՞ չը նայած իր զգւանքին՝ ժամանակ-ժամանակ խմում է մի կամ երկու բաժակ: Եթէ բրանից յետոյ չը ցանկայ մի ամբողջ շիշ խմել, կը նշանակէ, որ նա ազատւել է իր լծից: Հասկանում ես, գիտմամբ եմ այդպէս արել, որ ամեն բան քեզ յիշեցնէ:

ԵՒԱ. (չարախինդ կերպով): Եւ սակայն...

ԹԱԴէՌԻԾՈՒՅՆ: Եւ սակայն ես քո մասին ամենեին չեմ մտածել, նոյն իսկ երազի մէջ չեմ տեսել:

ԵՒԱ. (փայտի կտորները ծգելով կրակի մէջ, կարծես չը լսելով թաղէուշի խօսքերը): Դու տանջւել ես, խղճուկո: Քո հոգու մէջ երկի պայքարի և գժառւթեան սարսափելի բառ է տիրում! Ունենալ երջանիկ լինելու բոլոր իրաւունքները, լինել հարուստ, ունենալ այն բոլորը, ինչ որ ցանկանում ես, միևնոյն ժա-

մանակ սիրող ու սիրւած կին... բայց դու իսկապէս սիրում ես նրան: Կարելի է դա միայն կարծատես հանգիստ է պայքարի, ցաւի ու տանջանքի ճանապարհին, և դու դիակների ու ծխացող աւերակների մէջ վերցնում ես ուզմական սաղաւարտդ, որ սրբես քրտնած, բորբոքւած ճակատդ...

ԹԱԴէՌԻԾՈՒՅՆ (հեղնաբար): Մի ժամանակ ինձ զբաղեցնում էինքո այլաբանութիւնները, իսկ հիմա նրանք այլևս ոչինչ չեն ասում ինձ:

ԵՒԱ. (Շրջադրութիւն չը դարձնելով նրա խօսքերին): Դու երջանիկ ես միայն այն պատճառով, որ հանգստանալով դալարագեղ հովտում՝ կարող ես յետոյ գրոն տալ ու լեռները նւաճել... (նորից մտախոհ դաւնում է դէպի բովարին): Ախ, ինչպէս այն ժամանակ ես քեզ կը սիրէի:

ԹԱԴէՌԻԾՈՒՅՆ: Լսիր, Եւա, դու պիտի հեռանաս իմ տանից: Թողնենք ակնարկներն ու կիսատպուատ խօսքերը, թողնենք այդ խաղը: Դու գիտես, թէ ինչպէս ես սիրում էի քեզ,—ձիւնը, ճերմակ ու թաւ ձիւնը ծածկել է բոլոր յիշողութիւններս, ամեն մի ցաւ, պայքար ու տանջանք. բայց եթէ ձիւնը հալւի՞...

ԵՒԱ: Յետոյ, այն ժամանակ ինչ կը լինի:

ԹԱԴէՌԻԾՈՒՅՆ: Այն ժամանակ շատ վատ կը լինի:

ԵՒԱ: Ո՞ւմ համար:

ԹԱԴէՌԻԾՈՒՅՆ: Թէ քեզ համար և թէ ինձ համար, բայց ամենից շուտ Բրօնկայի համար:

ԵՒԱ. (շիկով իր ճակատը): Բրօնկայի համար... Բրօնկայի համար... Սի, ես նրան շատ սիրում եմ... (մի ակնթարթ ընդմիջումից յետոյ): Բրօնկան շատ դժբաղդ կը լինի:

ԹԱԴէՌԻԾՈՒՅՆ: (Մօտ է զնում եւ նստում է նրա մօտ): Լսիր, միայն լաւ լսիր ու աշխատիր հասկանալ, ինչ որ պիտի ասեմ քեզ. դու սովորութիւն ունիս ձևացնելու, իբրև թէ չես լսում, բայց հիմա բարի եղիր, թող քո այդ գեղեցիկ սովորութիւնը, որովհետեւ կատակ անելու տեղը չէ:

ԵՒԱ. (անտարբեր): Լսում եմ և կաշխատեմ հասկանալ:

ԹԱԴէՌԻԾՈՒՅՆ: Խոստովանում եմ ամբողջ սրտով, որ ես իսկապէս յուզած եմ. աւելին կասեմ—ես յաճախ մըտածել եմ քո մասին տենչանք եմ զգացել այն տանջանքների համար, որ դու պատճառել ես ինձ. բայց յիմա թնդ ինձ հանգիստ: Ես Բրօնկային եմ սիրում. ես Բրօնկայի հետ կը մնամ:

ԵՒԱ: Կը մնաս ու այդպիսով կը տանջես նրան: Քո սրտի վէրքերը նորից բացւել են, և դու թիթեռի նման թռչում ես գէպի կրակը. հինց այն բովկից, երբ իմ ձայնը լսեցիր այս վարագոյրի հետեւից, մի ակն-

Թարթում փլւեց այն խաղաթղթի ամրոցը, որ այնպիսի դժւարութեամբ և համբերութեամբ դու կառուցել էիր և անւանելսեպհական երջանկութիւն: (Հեղնական): Հա... հա... դու ինձ չես կարող խարել: Քեզ համար նեղ է այս հանգիստ ու տաքուկ անկիւնը, դու ձրգում ես արդելքներ ու նախապաշարումներ խորտակելու, նոր աշխարհներ նւաճելու: Դու վերջինն ես Կօնկլիստագորների\*) մեծ ու գեղեցիկ սերնդից, որոնց համար նեղ է եղել այն յիմար անկիւնը, որ յայտնի է եւրոպա անունով:

ԹԱԴԵՈՒԻՇ (կծու կերպով): Գեղեցիկ երազներ նոր աշխարհներ նւաճելու մասին, որոնց համար պէտք է մորթոտել անմեղ ու յիմար ոչխարհների ամբողջ հօտեր...

ԵՒԱ: Այդ չեմ ասում: Ամենից առաջ պէտք է ծովը սանձահարել, լեռները ճեղքել. պէտք է անցնել բոլոր տանջանքների և բաւականութիւնների հնոցով, որ քո հայեցքի առաջ նոր աշխարհ բացւի: Իսկ եթէ մի այլպիսի Կօնկլիստագոր իր երկաթէ գարշապարով պատահմամբ ճմլէ որևէ մի ծաղիկ, դրանից ի՞նչ... Երկարացնելով, կարծես ծովութեամբ): Ի՞նչ նշանակութիւն ունի թէկուր մի գեղեցիկ անտառ կտրտել, միայն թէ հայեցքը զւարձացնել նոր, չըտիմնւած հրաշքով:

ԹԱԴԵՈՒԻՇ: Եւ յետոյ ի՞նչ, յետոյ...

ԵՒԱ: Մի շտապիր... մի շտապիր... (յանկարծակի ծիծաղում է): Հա... հա... Ինչպէս եռում է քո մէջ Կօնկլիստագորների տաք ու կատաղիարիւնը. (Նայում է նրա վրայ եւ նորից ծայնը ցածացնում, կարծես թուլանալով): Բայց նախ պէտք է ծովը սանձահարել, լեռները ճեղքել, երկաթէ գարշապարով ծաղիկը ճմլել...

ԹԱԴԵՈՒԻՇ: Դու Բրօնկալին ես ակնարկում:

ԵՒԱ: (իստիքով լութեամբ իստիքով է կրակը եւ վառելիք է զցում):

ԹԱԴԵՈՒԻՇ (խորհրդատր կերպով): Բրօնկային...

ԵՒԱ: (անտարբեր): Դու գուշակեցիր:

(Ընդմիջում, որի ընթացքուն թաղէուշ յուզած ման է զալիս սենեակում):

\*)Կօնկլիստագորներ—իսկամէս նւաճողներ: Այդ անունով էին յայտնի Սպանական աւանտիրիստները, որոնք Կօլօմբոսի գիւտից յետոյ զնացել էին Ամերիկա և մի շարք պետութիւններ (Մեքսիկայ, Պերու և այլն) հիմնել: Ամերիկայի նւաճումը նրանց ճեռքով, որի ժամանակ գաղանութիւններ էին տեղական ցեղերը (ացտէկները, ինկերը և այլն), ներկայացնում է մարդկային պատմութեան ամենամոայլ էջերից մէկը:

ԹԱԴԵՈՒԻՇ (մ'օտենալրով նրան): Եւա, իմնդրում եմ քեզ, աղաչում եմ, թող մեզ հանգիստ: ԵՒԱ: Բայց չէոր դու այլևս հանգստութիւն չես ունենաւ:

ԹԱԴԵՈՒԻՇ: Գիտեմ, գիտեմ արդէն այդ բանը: Բայց Բրօնկան գոնէ հանգիստ կը լինի:

ԵՒԱ: Միթէ, Թաղէուշ, դու կմյուր ես, որ չես տեսնում քո շուրջը կատարող բաները: Միթէ դու չընկատեցիր, թէ ինչպէս անհանգիստ հայեացքով նա հետևում էր քեզ, ինչպէս նրա աչքերը, վախեցրած ծիծեռնակների նման, սահում էին մեր վրայով... Օ՛, ես նրան շատ սիրում եմ... Միթէ դու չէիր տեսնում նրա անբնական նեարդայնութիւնը. Նրա անարևեստ ձևացնելը, որով իւրաքանչիւր ըոտէ գիմում էր Կաղիմիրին, կարծես նրա օգնութիւնն էր որոնում... (Ընդլիջում, թաղէուշը շարունակ մ'ան է զալիս սենեակում՝ յետ ու առաջ):

ԹԱԴԵՈՒԻՇ: Հըմ... Այդպէս ուրեմն դու հպմողւած ես, որ ես ստեղծւած եմ նոր աշխարհներ նւաճելու: Ինչի՞ համար:

ԵՒԱ: Որ կեանքը գեղեցկացնես և ինքդ լինես գեղեցիկ:

ԹԱԴԵՈՒԻՇ: Իսկ եթէ չըկարողանամ նւաճել:

ԵՒԱ: Այն ժամանակ պայքարի մէջ ընկիր, մեռիր գրանում էլ կայ իր տեսակի գեղեցկութիւն:

ԹԱԴԵՈՒԻՇ: Իսկ եթէ այդ բոլորը ուժերի գատարկ վատնում է: Անմիտ ոչնչացումն է՝ իրա և բոլորը շրջապատողների:

ԵՒԱ: Դրանում էլ կայ գեղեցկութիւն: Տանջւող ու յուզող, ձգաող ու ծարաւի մարդը, դէպի ուր էլ լինի, ինչի էլ որ լինի, թէկուղ նպատակին էլ չըհանի, —միշտ էլ գեղեցիկ է:

ԹԱԴԵՈՒԻՇ: Իսկ եթէ նա ծարաւի է միայն հանգստութեան, խաղաղ անկիւնի, տաք բուժարնու?

ԵՒԱ: Դրանք Կաղիմիրի համար են:

ԹԱԴԵՈՒԻՇ: Իսկ ինձ համար:

ԵՒԱ: (Նայում է նրան երկար հայեացքով եւ ըլմծիծաղ է տալիս): Քեզ համար: —Ես, միայն ես —մենակ ես:

ԹԱԴԵՈՒԻՇ: (Կանգ է առնում նրա առաջ եւ իուում է ծնշած ծայնով):

Բայց ինչի, ինչի դու այն ժամանակ յետ մղեցիր ինձ, երբ ես ըրլորը զրի քո ուների առաջ, երբ ես կարող էի քեզ եւս և քո չնորհիւ նւաճել այն նոր աշխարհները, որոնց մասին դու հիմա թօսում ես: Ինչի՞ դու մերժեցիր, յետ մղեցիր ինձ:

ԵՒԱ: Որովհեակ դու չըկարողացար տիրել ինձ:

ԹԱԴԵՈՒԻՇ: Իսկ հիմմա:

**ԵՒԱ:** Հիմա սիրում եմ քեզ, սիրում եմ այն պատճառով, որ դու ուզեցիր ինձ մոռանալ, որ ուզեցիր կոտրել քեզ. միայն ուժեղը կարող է իրան կոտրել: Սիրում եմ քեզ անձկութեամբ և երկիւղով, որ դու չես ցանկալ իմը գառնալ:

**ԹԱԴԻՌԻՇ:** (Նեարդային կերպով ծիծաղում է), Պէտք է լամպը վառել, Բրօնկան ամեն մի ըոպէ կարող է ներս գալ և քո գրական զեղումները իրականութեան աեղ ընդունելով՝ կարող է կասկածել, թէ ես քաղցր «heures de confidence \*»—ներ եմ անցկացնում քեզ հետ: (Լամպը վառում է, Ընդմիջում):

**ԵՒԱ:** (անտարբեր): Եւ դու շատ թափառեցիր երկը երկիր:

**ԹԱԴԻՌԻՇ:** (Նայելով նրան զարմացած եւ նրա տօնով—եղանակով): Երկար, համարեա երկու տարի:

**ԵՒԱ:** Կարծեմ, Աֆրիկայում էլ եղել ես:

**ԹԱԴԻՌԻՇ:** (Հեղումթեամբ): Եղել եմ: Բայց այն ամենը, ինչ որ կարելի էր այստեղ յայտնագործել, արգէն արել է Ստենլին: Իսկ ես զւարճացել եմ վագրի որսորդութեամբ... Դու իրաւացի ես... հա... հա... հա... Ես ստեղծած եմ կօնկւիստադօր լինելու: Երբ իմ աչքերի առաջ վագրը յօշոտեց երկու նեգրների, ես իսկապէս յաղթանակ չըզգացի...

**ԵՒԱ:** (Կծու կերպով): Հապա ի՞նչ...

**ԹԱԴԻՌԻՇ:** Եւ... հասարակ միտք անցաւ գլխովս —որ հիմա հերթը իմն է:

**ԵՒԱ:** (Ճաղրական): Դու անզէն էիր:

**ԹԱԴԻՌԻՇ:** (Նրա տօնով): Հրացանիս փամփուշտները խոնաւացել էին:

**ԵՒԱ:** Եւ դու չըվախեցար մահից:

**ԹԱԴԻՌԻՇ:** Ես ծարաւի էի նրան: Յօշուած լինել արբայ-գաղանից—դա էլ նոյնպէս իր զեղեցկութիւնը ունի...

**ԵՒԱ:** Այն, դա գեղեցիկ է... Բայց ես ձայներ եմ լսում, Բրօնկան վերադարձել է: (Լատում է, որ նախասենեակի դրտը բացում է). Բրօնկայի եւ Կազիմիրի բարձր խօսակցութիւնը):

## 2. ԵՐԵՒՌԻՇԹ

ԲՐՈՆԿԱՆ ԵՒ ԿԱԶԻՄԻՐԾ ՆԵՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ.

**ԲՐՈՆԿԱՆ (ուրախ ձեւանալով):** Ա՛խ, եթէ գիտենայիր, թէ ինչպէս մենք հիանալի սահում էինք: Օ՛, այդ պեծին տող ձիւնը սառուցի վրայ, և լուսինը, լուսինը...

\*.) «Leures de confidence»—առանձնացման ժամեր, գաղտնի ժամեր:

Ա՛խ, ինչպէս հրաշալի էր! Զէ որ ինքդ ասում էիր, Կազիմիր, որ սքանչելի է! (Դիմելով Եւային): Վաղը գուանդամառ պիտի զաս մեղ հետ, այդ բոլորը կարծեա դիտմամբ քեզ համար է ստեղծւած. ձիւն, լուսին և Կազիմիրն... հա—հա—հա! Տես, ինչպէս Կազիմիր տիսուր է, այն ինչ ես չեմ տեսել մէկին, որ կարողանար սահուկով այնպէս լաւ սահել, ինչպէս նա:

**ԿԱԶԻՄԻՐԾ:** Բրօնկան ըստ իր սովորութեան չափանցացնում է: Ո՛չ մի հրաշալի բան չը կար: Լիճը ամբողջովին չէր մաքրած. իսկ իմ սիրելի օւլու զւարձանում էր նրանով, որ մինչև ծնկները խրւած ձիւնի մէջ թափառում էր:

**ԲՐՈՆԿԱՆ (ցրած մ'տրով):** Ա՛խ, ինչպէս ստում է, ինչպէս ստում է... Օ՛հ, ինչպէս դու չար ես: (Յանկարծակի դիմելով թաղէուշին): Թաղեա, կարելի է դժոն ես իմ երկար բացակայութիւնից: Բայց իմ սիրելի, ես գիտէի, որ դու այստեղ իմ թանկագին եւայի հետ ես: Ես դիտմամբ ուզեցի թողնել ձեղ միասին առանձնացած, որ գէթ մի ամբողջ տարուց յետոյ հանես զեղջուկի բաճկոնդ և եւայի հետ միասին սկսես սաւառնել այն բարձունքների վրայ, որոնք ինձպէս խղճուկի համար չափազանց բարձր են (Գլուխով, սեղմ եկելով Եւային): Ա՛խ, ինչպէս երջանիկ ես, եւա, դու բոլորովին ուրիշ տեսակի ես: Ա՛խ, ինչպէս լաւ յիշում եմ քեզ, երբ իմ նշանւելուց յետոյ գալիս էի քեզ մօտ: Լսում ես, Թաղեա: Սենեակը իսկ և իսկ որպէս նման էր, որտեղ հիմա մենք նստած ենք... (Կարծին զարթնելով ընից): Եւա, տարօրինակ չէ, որ այն սենեակը իսկ և իսկ զարդարւած էր մեր այս սենեակի նման:

**ԵՒԱ:** Բայց այստեղ ի՞նչ տարօրինակութիւն կայ, Բրօնկա, գա ուղղակի պատահականութիւն է:

**ԹԱԴԻՌԻՇ (սառնութեամբ):** Երեկ միենոյն պատառ կպցնողն է զարդարել թէ պաննա եւայի և թէ իմ բնակարանը:

**ԲՐՈՆԿԱՆ:** Հըմ... կարելի է: Յիշում ես, եւա, ինչպէս մենք նստում էինք բուխարու առաջ: Դու աչքերդ յառում էիր կրակին, իսկ ես անվերջ խօսում էիր անվերջ. չեմ յիշում նոյն իսկ, թէ ինչիք մասին էիր գատարկաբանում, իսկ դու այնպէս բարի էիր, այնպէս ներողամիտ... (Վոթկում է անսպասելի ծիծաղութիւն):

**ԹԱԴԻՌԻՇ (մօտենում է նրան, ընթութեամբ):** Ի՞նչ է պատահել քեզ, իմ սիրելի մանուկ, ինչիք այսօր դու այսպէս նեարդային ես:

**ԲՐՈՆԿԱՆ:** Գիտես, ես կուզենայի վեր ոլանաւ ճախրել բարձր, ինչպէս թոչուն, բայց թերս միայն դեսնին են զարնւում. ես այնպէս տիսուր եմ, այնպէս

փափագում եմ սաւառնել, բայց թեհրս արճճի պէս են... (Յային): Ա՛խ, Եւա, ինչպէս դու երջանիկ ես!

**ԿԱԶԻՄԻՐ:** Տեսնմամ ես, ես չէի ասում քեզ, որ սաստիկ վարժութիւնները և սպօրաը հակառողջական են: Ես չէի ինդրում, չէի համոզում. բայց չուզեցար ինձ լսել, և հիմա պիտի տուժես ումանտիքական զբուանքից:

**ԲՐՈՆԿԱ:** (յամառովմեամբ): Բոլորովին այդպէս չէ, ի հարկէ, չէ. բաւական է, որքան նեարդային ցնցումներից տանջւեցի. ես յիմար, քմահամ երեխայ եմ: (փղձկում է անսպասելի լացով եւ վազում է միւս սենեակը: Եւան՝ վեր ցատկելով՝ ուզում է զնալ նրա յետելից):

**ԹԱԴԻՀՈՒՇ:** Մնացէք այստեղ, ես մենակ նրան շուտ կը հանգստացնեմ: (Դուքս է զնում Բրոնկայի յետելից):

### 3 ԵՐԵՒՅՑԹ

**ԿԱԶԻՄԻՐ (անհանգիստ):** Բրոնկան, կարծեմ հիւանդ է: Ամբողջ օրը նա յուզւած և անբնական կերպով գրգռւած է...

**ԵՒԱ:** Ես ինքս գարմանում եմ, ես նրան երբէք չեմ տեսել այդպէս:

**ԿԱԶԻՄԻՐ (յանկարծօրէն):** Բայց դուք նկատե՞լ էք, որ Բրոնկան այդպէս փոխւել է միայն երեկւանից:

**ԵՒԱ:** Մի քանի բոպէ առաջ ես նոյնն էի ասում ձեր եղբօրը:

**ԿԱԶԻՄԻՐ:** Դուք նկատե՞լ էք նրա անհանգստութիւնը երեկւայ ընթրիքի ժամանակ և այսօր ամբողջ օրը:

**ԵՒԱ:** Հէնց դրա վրայ ես էլ գարմացել եմ:

**ԿԱԶԻՄԻՐ:** Եւ դուք չէք գուշակում այդպէս յանկարծակի փոխւելու պատճառը:

**ԵՒԱ:** Ո՞չ:

**ԿԱԶԻՄԻՐ:** Հմ... Դուք նկատե՞լ էք, որ Թաղէուշն էլ ինքն իրան չի պատկանում, դարձել է մտածելու, ցրւած...

**ԵՒԱ:** Ես ուրիշ կերպ նրան չեմ տեսել:

**ԿԱԶԻՄԻՐ:** Բայց ես տեսել եմ. նա վերադարձել էր ուրախ, երջանիկ, Բօնկային կարօտած: Ես վաղուց նրան չէի տեսել այդպէս կենսուրախ ու վստահ իր ուժերին և իր երջանկութեանը:

**ԵՒԱ:** Դրանից ի՞նչ:

**ԿԱԶԻՄԻՐ (ուշաղովմեամբ նայելով նրան):** Ես չեմ հասկանում նրա այդպիսի յանկարծակի յեղաշրջան պատճառները:

**ԵՒԱ:** Ինձ թւում է, թէ դուք ինձ էք վերագրում

նրանց հոգեկան տրամադրութեան այդ յանկարծակի փոփոխութեան պատճառը:

**ԿԱԶԻՄԻՐ:** Դուք նկատեցիք, որ այսօր Բրոնկան նախաճաշելու դուրս եկաւ կարմրած աչքերովի: Ես կարող եմ երգւել, որ նա ամբողջ գիշերը լացել է:

**ԵՒԱ:** Դուք կարծում էք, թէ այդ բանում մեղաւորը Բս եմ:

**ԿԱԶԻՄԻՐ:** Ի՞նչ էք ասում. ես չեմ էլ մտածել ձեզ որեւ բանում մեղադրելու... Այստեղ բոլորովին ուրիշ բան է թագնւած... Ես չէի ցանկալ, որ դուք մի բոպէ անգամ կասկածէիք իմ վերաբերմամբ, որ նպատակ ունիմ ձեզ հարցաքննելու: Բայց երեկւանից այստեղ ամեն բան այնպէս ակներեւ և տարօրինակ կերպով փոխւել է... Ես զգում եմ, որ այստեղ մի ինչոր տխուր հանելուկ կայ, որը ես կը ցանկայի լուծենի: Գիտէք, որ ես նեարդային մարդ եմ, իսկ այդպիսին երը չեն կարողանում տանել ծանր մթնոլորտը փոթորկից առաջ:

**ԵՒԱ:** Ծանր մթնոլորտը փոթորկից առաջ:

**ԿԱԶԻՄԻՐ:** Այս, այս: Ինչպէս ուզում էք, անւանեցք: Յամենայն դէպս, ինչոր բան կայ օդի մէջ, որ Բրոնկայի տպաւորւղ հոգին բնազդօրէն զգում է... Այսուհետեւ էք նրա լացը:

(Հարեւան սենեակից երեւում է, որ Թաղէուշը զրկում է Բրոնկային՝ հանգստացնելով նրան: Ընդմիջում):

**ԿԱԶԻՄԻՐ:** (Ականչ է դնում առելի ու առելի մեծ անհանգստովմեամբ):

**ԵՒԱ:** (Յան արագովմեամբ վեր է կենում տեղից եւ նոյնպէս անհանգստովմեամբ մ'ան է զալիս սենեակում):

**ԿԱԶԻՄԻՐ:** (Քայլելով նրա յետելից): Դուք լըսում էք:

**ԵՒԱ:** Կամաց... կամաց...

**ԿԱԶԻՄԻՐ:** (Բնուամբ է նրա ձեռքից եւ տանումէ դէպի պատուանը): Լինենք անկեղծ: Ես ձեզ չեմ ձանաչում, բայց ինչ որ Բրոնկայից ու Թաղէուշից լսել եմ ձեր մասին, բաւական է ինձ համար, որ գաղափար կազմեմ ձեր հոգու մասին,

**ԵՒԱ:** (անստարեիր): Ինձ մի տանջէք հիմա: Ես առաջուց գիտեմ այն, ինչ որ ուզում էք ինձ ասել:

**ԿԱԶԻՄԻՐ:** Ո՞չ ոչ, դուք այդ չը զիտէք... Ես երբէք չեմ խառնուում ուրիշի գործերի մէջ, նոյնիսկ այնպիսի՝ ինձ համար մօտ ու թանկագին մարդկանց գործերի մէջ, որպիսին են Բրոնկան ու Թաղէուշը:

ճախ նամակներ էր գրում ձեզ, որոնց մէջ, երկի, ըաց էր անում իր սիրտը: Դուք ուրեմն գիտէք, որ նա ինձ սիրում էր, Դուք նոյնպէս գիտէք, որ այդպիսի սէրը կարելի է ձեւով ծածկել, բայց գրանից նա աւելի խիստ կը բորբոքէ և աւելի բուռն կերպով կարտա-յայտի:

**ԿԱԶԻՄԻՐԻ:** Ես միենոյն բանն էի ուզում ասել:

**ԵՒԱ:** Բրօնկան ձեզ պատմել է, որ պանսիօնում խելագարի պէս սիրում էի իրան, որ մենք անբաժան էինք միմեանցից: Երկի, նա բոլորը պատմել է ձեզ:

**ԿԱԶԻՄԻՐԻ:** Այս, երէկ նա երկար պատմում էր դրա մասին:

**ԵՒԱ:** Դուք անկեղծ էք. ես էլ ձեզ հետ անկեղծ կը լինեմ: Մի երկու տարի յետոյ՝ նա ինձ մօտ եկաւ արդէն իբրև Թաղէուշի հարսնացու, գեղեցիկ, գոհ ու երջանիկ, ո այնպէս երջանիկ, որ թէկ իմ սիրտը պա-տառ—պատառ էր լինում, բայց և այնպէս ես հաշտ-ւեցի այն մտքի հետ, որ նա պիտի դառնայ մի մար-դու կին, որին ես բուռն կերպով սիրել եմ:

**ԿԱԶԻՄԻՐԻ:** Դուք նրան սիրում էիք:

**ԵՒԱ:** Այս, երբ նա ինձ համար կորած էր... (Մի ըրպէի չափ նայում են միմեանց): Իսկ հիմա դուք ուզում էր հարցնել, թէ ինչի՞ ես եկել եմ փշրելու իմ ընկերունու երջանկութիւնը: Այնպէս չէ:

**ԿԱԶԻՄԻՐԻ:** Կարելի է մի բոպէ առաջ իմ գլխում այդպիսի հարց ծագում էր, բայց հիմա նա բոլորովին անհեթեթ է: Պարզ ասած, մի առանձին սիմպատիա ես չեմ տածում դէպի ձեզ. ոչ, ոչ, ես այդ չէի ուզում ասել. Ընդհանուր գծեր մենք շատ քիչ ունենք, բայց դա չի խանգարում արդարացի լինելու դէպի ձեզ... (Յանկարծակի): Դուք միշտ տխներ էք եղել:

**ԵՒԱ:** (զլուխը լրած պատուհանի ապակու վրայ՝ լուսմ է):

**ԿԱԶԻՄԻՐԻ:** Դուք միշտ ձգուել էք այնպիսի բա-նի, որին գիտէիք, որ չը պիտի կարողանաք համել:

**ԵՒԱ:** (դառնում է դէպի նա եւ շարունակում է լոել):

**ԿԱԶԻՄԻՐԻ:** Զեր կեանքում դուք ուխտել էք՝ կա-պել ու քաշել ձեր յետեկց մի մարդու, որ անշէջանձ-կութեամբ կուրօքէն յետեկ ձեզ:

**ԵՒԱ:** (իսկանդավառ կերպով): Այս!

**ԿԱԶԻՄԻՐԻ** (արագութեամբ): Եւ այդ մարդը Թա-դէռշն է:

**ԵՒԱ:** (ուժգին): Այս!

**ԿԱԶԻՄԻՐԻ** (արագութեամբ): Իսկ Բրօնկան:

**ԵՒԱ:** Լսում էք, ինչպէս նա երջանիկ ծիծաղում է հիմա... Գիտէք, արդեօք, թէ ինչ պիտի լինի յետոյ:

**ԿԱԶԻՄԻՐԻ:** Ի՞նչ:

**ԵՒԱ:** Բրօնկան դուրս կը գայ, կը փարւի ինձ և ջերմորէն ներողութիւն կը խնդրէ ինձանից իր վար-մունքի համար: Լսէք... լուսնկայ գիշեր է—տէք մուշ-տակս... մի քիչ զբունենք. կարելի է մեր սրտերի մէջ արձագանք տան աւելի ցեղակից լարեր: (Երկար նա-յում է նրան): Ի հարկէ, դուք չէք հրաժարւիլ:

**ԿԱԶԻՄԻՐԻ:** Ինչչց:

**ԵՒԱ:** Որ սիրում էք Բրօնկային:

**ԿԱԶԻՄԻՐԻ** (ուշադրութեամբ նայում է Եւային): Այս!

**ԵՒԱ:** Լսում էք նրա ծիծաղը, այդ սքանչելի, ար-ձաթահնչիւն, կուսական ծիծաղը:

**ԿԱԶԻՄԻՐԻ:** Գնանք, գնանք:

#### 4 ԵՐԵՒԱՆՑԹ

Բրօնկան ու Թաղէուշը ներս են մտնում՝ թեւանցուկ ըստ երեւյթին ուրախ ու երջանիկ:

**ԲՐՕՆԿԱՆ.** (Եւային): Սիրելի թանկագին Եւա: Դու վաղուց ինձ ճանաչում ես... Դուք բոլորդ չափազանց բարի էք եղել դէպի ինձ, դու երես ես տւել ինձ քո բարութեամբ. Իսկ Թաղէուշը բոլորովին փչացրեց: Եւա, դու գիտե՞ս, որ ես խելագար եմ. բոպէներ են լինում որ ես բոլորովին անընդունակ եմ լինում իմ արածների մասին հաշեւ տալու:

**ԵՒԱ:** Ինչի՞ այդպէս տխուր ես: Ինչի՞ համար ես ներողութիւն խնդրում ինձանից: (Շոյում է նրա երե-սը): Ա՛խ, դու իմ Միմծզա: Ինչպէս դունեարդային ես կասկածամիտ...

**ԲՐՕՆԿԱՆ.** Երեխային կարելի է ներել եթէ նա չի տիրում իր քմահաճոյըներին, բայց ինձ չի կարելի: (Ներլորէն, վաստ կերպով եւ շվիթւած): Գիտե՞ս, եր-բեմն ինձ վրայ այնպիսի ծանր մտքեր են գալիս: Ո՛չ, այդ չէ... այդ չէ... Դա էլ այնպէս է, ինչպէս այն ժա-մանակ... Ո՛չ ես գժբաղտութիւն եմ նախազգում, այլ հեռաւոր յիշողութիւն այն տանջալի ժամերի մա-սին, որ ես անց եմ կացըել իմ մանկութեան ժամա-նակ, երբ ես ամբողջ կալւածքում իգուր որոնում էի իմ քըոջը... Ես գիտէի, որ նրա հետ դժբաղտութիւն է պատահել: Զգում էի այդ, զգում: Ամբողջ անտառը տակն ու վրայ արի, վազեցի գետի ամբողջ եղերքով և վերագրձայ տուն՝ յոգնած տանջւած: (Սաստկացող երկիրով սեղմում է Եւային): Եւա, Եւա, ինձ թւում էր, թէ մէկը հասնում է ինձ, բռնում է մազերիցս... Վերանդայի առաջ ես վաշ ես վայր ընկայ խոտի մէջ երես ձեռքերով ծածկած, որ չը տեսնեմ, իսկ նրանք շարու-նակ գալիս էին ու գալիս...

**ԵՒԱ. Ո՞վ:**

**ԲՐՈՆԿԱ:** Գիւղացիները և նրանց հետ իմ դայեակը. նրանք պատգարակի վրայ բերում էին իմ սիրելի քրոջը. նա խեղգւել էր լճակի մէջ:

**ԵՒԱ. (ակամայ):** Լճակի մէջ:

**ԲՐՈՆԿԱ:** Այն, այն, լճակի մէջ. (Թաղէուշին): Հրամայիր, որ մեր լճակը հողով լցնեն. նա ինձ միշտ յիշեցնում է այն լճակի սկ ու խորունկ անդունդը՝ կոյր աչքի նման...

**ԹԱԴԻՇՈՒԾ:** Հանգստացիր, Բրօնկա, հանգստացիր: Բոլորը կանեմ, ինչ որ միայն ցանկաս: Ուզում ես—մեր շուրջը ամեն բան հողին հաւասարեցնեմ: (Յանկարծ բարկացած նայում է Եւային, որ Բրօնկան՝ յենաւծ լինելով նրան՝ չի նկատում): Այն, բոլորը կանեմ. լճակները հողով կը լցնեմ, ծառերը կը կտրեն...

**ԵՒԱ:** Կարելի է, բոլոր ձիւնն էլ կը հրամայեք գետնից սրբել: Ախ, մանուկներ, մանուկներ. Հիմա էլ պան Թագէուշի հերթն է բարկանալու:

**ԲՐՈՆԿԱ:** Թագեա, ինչնի եմ քո տրամադրութիւնը փչացրել այսօր:

**ԹԱԴԻՇՈՒԾ:** Սիրելի Բրօնկա, դու ոչնչով չես փլացրել իմ տրամադրութիւնը: Միայն ցաւում եմ, երբ տեսնում եմ, որ դու ինձ մօտ էլ չես կարողանում մոռանալ քո մանկութեան հեռաւոր տիսուր յիշողութիւնները:

**ԵՒԱ.** (Չոյում է նրա երեսը): Մոռացիր, մոռացիր... Պարոններ, թողէք ինձ ու Բրօնկային այստեղ մենակ, և նա շուտով կը հանգստանայ ինձ մօտ:

**ԿԱԶԻՄԻՐ:** Ճիշտ էք ասում. գնանք Թագէուշ:

**ԹԱԴԻՇՈՒԾ:** Հանգստացիր, Բրօնուսեա, հանգստացիր :

**ԲՐՈՆԿԱ:** Տեսնում ես, ես արդէն հանգստացել եմ. բայց դուք գնացէք, Եւայի հետ առանձին ես աւելի լաւ կը զգամ: Միայն նա միշտ կարողանում էր ինձ հանգստացնել:

(Կազիմիրն ու Թագէուշը զնում են):

**ԿԱԶԻՄԻՐ** (ղոնից դուրս գալիս յիտ է նայում) Պաննա Եւա, դուք ինձ առաջարկեցիք պուրակում զրունակութիւն:

**ԵՒԱ:** Եւտոյ, յետոյ, երբ Բրօնկան բոլորովին հանգստանայ:

**ԲՐՈՆԿԱ:** Դուրս չը գնանք, արգեօք բոլորս միասին:

**ԵՒԱ:** Ո՞չ, ոչ թանկագինս, ես ուզում եմ քեզ համար հածելի հիւր լինել. երիտասարդ զոյգի համար հիւրը բեռ է դառնում, եթէ հարկազրում է զբաղեցնել իրան: (Շարունակում է զգի նրան): Քեզ սարսափեցնում է լճակի սկ խորութիւնը, բայց այստեղ այնպէս յարմարաւոր և դուրալի է քեզ համար, մարդուդ հետ

միասին, այս անկիւնում: (Կազիմիրը դուրս է զնում Եւայի հէնց սկզբի խօսքերի ժամանակ):

## 5 ԵՐԵՒՑԹԹ

**ԲՐՈՆԿԱ:** Եւա, ես շատ անտանելի եմ:

**ԵՒԱ:** (մտածմունքի մէջ ընկած): Ո՞չ, ոչ, միայն ինձ զարմացնում է քո անսպասելի բռնկւելը:

**ԲՐՈՆԿԱ:** Վաս մտքով մի հասկանար այդ, Եւա, ԵՒԱ. Ո՞չ, եթէ նոյն իսկ...

**ԲՐՈՆԿԱ:** (կարծես զուշակելով նրա մտքերը). Ի՞նչ:

**ԵՒԱ:** Եթէ նոյնիսկ քո մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը... (Ընդհատում է): Անկեղծ եղիք, զու ինչ որ անորոշ երկիւղ ես զգում... Կարելի է, նոյն իսկ երկիւղ չէ... բայց ես չեմ գտնում քո մէջ այն վստահութիւնը, որով առաջ վերաբերում էիր ինձ,

**ԲՐՈՆԿԱ:** (մի րոպէ պառկալից յետոյ): Ես անկեղծ կը լինեմ և պարզ կասեմ քեզ բոլոր ճշմարտութիւնը... Դու գիտե՞ս, շատ փոխւել ես...

**ԵՒԱ:** (ըլմծիծաղ տալրով): Ես փոխւել եմ:

**ԲՐՈՆԿԱ:** Ինձ համար, հիմա, երկու տարուց յետոյ, դժւար է քեզանում գտնել իմ առաջւայ սիրելի Եւային. Երբեմն ինձ թւում է, թէ ամբողջ յաւիտենականութիւն է անցել այն ժամանակից, երբ դու այնպէս սրտագին ինձ գրկեցիր, ուրախակից լինելով ինձ՝ իմ ու Թագէուշի դուշի դաշինքի առիթով:

**ԵՒԱ. (ակամայ):** Այն, այն ժամանակից անցել է ամբողջ յաւիտենականութիւն...

**ԲՐՈՆԿԱ:** Ահա տեսնում ես, ես նայում եմ դէպի այդ յաւիտենականութեան խորքը այնպէս անմխիթար կերպով և այնպիսի երկիւղով: Գիտե՞ս, հէնց այդ պատճառով ես յիշեցի լճակի այն սկ խորութիւնը: (Եւան շոյում է նրա մազերը): Կարելի է, ես մի քիչ զառանցում եմ, կարելի է, ես բոլորովին առողջ չեմ, միայն ինձ թւում է, թէ քո ձեռքերի հպումն էլ հիմա ուրիշ կերպ է. ոչ մի նմանութիւն առաջւանի հետ: Առաջ այնպէս էր լինում, որ կարծես դու ուզում էիր վառել ինձ քո սիրով: Գիտե՞ս, որ լինում են զրկախառնութիւններ, որ այրում են, ինչպէս հրաշէկ երկաթ. իսկ հիմա նրանք այնպէս օտար են, հեռու... Գիտե՞ս, գիտե՞ս... Սպասիր, զա կարծես աշնան թախիծն է դեղ. Նած տերեւները սրբում շագանակեայ ծառուղիներից..

**ԵՒԱ:** Թախիծը:

**ԲՐՈՆԿԱ:** Այն, թախիծը: Ախ, ինչպէս ինձ վախեցնում է քո թախիծը! Յիշում ես, երբ մենք պանսիոնում էինք, ես վախենում էի քո բուռն, իանդագառ սիրուց, իսկ հիմա վախիծնում եմ քո թախիծից: Ասա

ինձ, Եւա, ինչի՞ ես միշտ պիտի վախենամ քեզանից:  
ԵհԱ: Լսիր, դու հիմա յուղւած ես, բայց ես լաւ  
հասկանում եմ քեզ: Դիտակցաբար ես մի ամենափոքր  
փոփոխութիւն անգամ չիմ զգում քո վերաբերմամբ,  
բայց կարելի է ես իսկապէս փոխւել եմ... դու հիմա  
իմը չես, ամբողջապէս իմը չես, ինչպէս առաջ. դու սի-  
րում ես ամուսնուդ և, կարելի է, անգիտակցաբար  
վախենում ես ինչոր անըմբոնելի բանից... Ա՛, ես գի-  
տում (յանկարծ ծիծաղում՝ է), կարելի է աղաւնեակս  
դու խանդոտ ես: Դէ, ասա, անկեղծօրէն:

ԲՐՈՆԿԱ: Ո՛չ, ոչ, ես խանդոտ չեմ, բայց իսկա-  
պէս ինչոր բանից վախենում եմ:

ԵհԱ: Ինչից:

ԲՐՈՆԿԱ: Քո գեղեցկութիւնից...

ԵհԱ: Այդ ինչ է նշանակում:

ԲՐՈՆԿԱ: Ի՞նչ է նշանակում: Դիտես, մի կին կա-  
րող է գեղեցիկ լինել, աշխարհի բոլոր կանանցից գե-  
ղեցիկ, բայց ես երբէք չէի վախենալ այդպիսի կնո-  
ջից, որովհետև գիտեմ, որ Թաղէուշը նոյն իսկ ուշը  
չէր դարձնի այդպիսի գեղեցկութեան վրայ: Բայց դու  
ուրիշ տեսակ գեղեցիկ ես..., Քեզ մօտ զարթնում են  
անծանօթ թախիծ ու ցանկութիւն. դու կարող ես մար-  
դու շղթայել ու հրապուրելով՝ քաշել քո յետեից՝ նոյն  
իսկ չըկասկածելով, որ նա գալիս է քո յետեից. նա էլ  
գալիս է չիմանալով, թէ նուր կըտանէ իրան քո հմայ-  
քը: Եւ սակայն կուրօրէն խարխափելով՝ գնում է առաջ  
ու առաջ...

ԵհԱ: Բայց դէպի ուր:

ԲՐՈՆԿԱ: Զը գիտեմ ես, չը գիտեմ: Ես այդ բո-  
լորը չեմ հասկանում, բայց զգում եմ: Մի ինչոր բան  
ձմլում, տրորում է սիրտս ու հոգիս, ճաքեցնում գլու-  
խըս, բայց թէ ի՞նչ բան է—ինքս էլ չը գիտեմ... (Մտա-  
խո՞): Կազեան այսօր ինձ ասաց, որ մի ինչոր կէտ  
կայ, որտեղ բոլոր հակասութիւնները համաձայնում  
են... Լաւ չեմ յիշում, թէ ինչպէս նա ասաց, բայց  
մօտաւրապէս այնպիսի մի բան էր—թէ ինչպէս ան-  
սահման մեծ երկրագունդը տափակում է: Իսկ ես մտա-  
ծում եմ այն մասին, որ եթէ լճակի այն սկ խառնա-  
րանը անվերջ կերպով խորացնելի, այն ժամանակ նրա  
յատակը կը միանար երկնքի հետ... (Մտախո՞): Դէպի  
ուր: կամ դէպի լճակի սկ անդունդը, կամ դէպի վեր,  
դէպի երկնային անհուն տարածութիւնը:

ԵհԱ: Ո՞րտեղից են գալիս այդպիսի մաքեր:

ԲՐՈՆԿԱ: (յանկարծ սկսում՝ է ուշադրութեամբ  
նայել նրան, իսկ յետոյ ժամանով): Այս, այս, Եւա,  
մենք չենք կարողանում մեզ վերլուծել: (Անակնկալ  
ընթացովթեամբ): Տեսնում ես հիմա, երբ իմ երկիւղից  
և նախադրացումներից մի ինչոր աւելի որոշ ու պարզ

բան է նշանակում, երբ ես սկսում եմ ըմբռնել այն  
բոլորը, ինչ որ խմբուում, եփուում էր իմ մէջ՝ անզօր  
գոնւելով դուրս գալու, — հիմա այնպէս շնորհակալ եմ  
քեզանից... Նորից քեզ մօտիկ եմ զգում ինձ... Բայց  
տարօրինակ բան... Իմ մէջ էլ ինչոր թախիծ է մը-  
տել... Բայց կարելի է թախծելու համար ես չափա-  
ղանց անզօր եմ... այդ թախիծը դգալու, նրա տան-  
ջանքները տանելու...»

ԵհԱ: Ի՞նչ թախիծ դու կարող ես ունենալ: Մի-  
թէ քո բոլոր ցանկութիւնները չեն կատարւել:

ԲՐՈՆԿԱ: Մէկը՝ դեռ ոչ:

ԵհԱ: Եւ դու գիտեմ—որը չի կատարւել, գի-  
տեմ:

ԲՐՈՆԿԱ: Դեռ ոչ, դեռ ոչ: (Ընդմիջում):

## 6 ԵՐԵՒԱՑՅԹ

ԿԱԶԻՄԻՐ: (Ներս է զալիս եւանհանգատութեամբ  
դիմում՝ Բրօնկային): «Իմ սիրելի հարս, հիմա հան-  
գիստ ես զգում քեզ:

ԲՐՈՆԿԱ: (Միանգամից ուրախ ցոյց տալով իրան):  
Գնա գործիդ, դու էլի ուզում ես ինձ ծաղրել: Կշտա-  
ցել եմ քո փելիսոփայութիւններից այն հակասութիւն-  
ների մասին, որ պիտի միանան մի ինչոր կէտի  
վրայ:

ԿԱԶԻՄԻՐ (կատակով): Դու այնքան էլ պարզ  
չարտայացեցիր, սակայն ինքդ կարող ես քեզ վրայ  
այդ փաստը ստուգել: Մի բոպէ առաջ դու տիսուր և  
քմահաճ էլիր, իսկ հիմա արդէն ուրախ ես...

ԲՐՈՆԿԱ: Յամենայն դէպս քեզ չը պիտի շնոր-  
հակալ լինիմ դրա համար, որովհետև քո մասյ դէմքը  
ում տրամադրութիւնն ասես, որ չը փշացնէ:

ԿԱԶԻՄԻՐ: Սպասիր, վաղը իմ դէմքը աւելի ևս  
տիրեցնող կը դառնայ:

ԲՐՈՆԿԱ: Շատ շնորհակալ եմ:

ԿԱԶԻՄԻՐ (Եւային): Կարելի է հիմա, ուստու-  
սու, կը ցանկայիր ինձ հետ զրօնել: Ես մի ժամով  
թաղէուշին նստեցրել եմ իր տնտեսական հաշիւները  
կարգի բերելու, որովհետև իմ գլուխը դուրս չի գալիս  
նրանցից:

ԵհԱ: Իսկ դու, Բրօնկա, մոռացիր քո միրաժները,  
հանգստացիր, հանգստացիր (Բրօնկային զրկում, պատ-  
կեցնում է բազմոցի վրայ եւ շալով ծածկում):

ԲՐՈՆԿԱ: Ա՛խ, ինչպէս լաւ եմ զգում, ինչպէս  
լաւ է:

(Եսան ու կազմիրը դուրս են գնում):

## 7 ԵՐԵՒՅՑԹ

**ԲՐՈՆԿԱ.** (մի րոպէի չափ հանգիստ պատկում է, ապա կամացով բարձրանում մի փոքր, անհանգիստ կերպով ականջ է դնում, յետոյ կորսաժի ծոցից հանում է նամակը, նայում է վրան համբուրում եւ նրանով ծածկելով երեսը՝ հանդարտ լավիս է): Իմ թաղէ իմ միակ թաղէ:

ՎԱՐԱԳՈՅՑ:

## III ԱՐԱՐԻԱԾ.

Պայծառ կերպով լուսաւորւած պատուհաններից երեւում են Բրօնկան եւ Թաղէուշը. որոնք ապահանջ ջերմանոցով անցնում են դահլիճը: Վաղ առաւու է: Պատուհանի առաջ, ձինի վրայ, ցոլցուատում է արեգակը: Բրօնկան ներս է դալիս առաջինը և յենում թիկնարանին:

### 1 ԵՐԵՒՅՑԹ

ԲՐՈՆԿԱ և ԹԱՂԷՈՒԻՇ:

**ԲՐՈՆԿԱ:** Ո՞չ մի տեղ, ո՞չ մի տեղ չեմ կարողանում հանգստութիւն գտնել... Ո՞չ մի տեղ, ո՞չ մի տեղ: Բայց այնպէս ցանկանում էի յենւել քեզ և հանգստութիւն գտնել քեզ մօտ... Թաղէ, Թաղէ! Ի՞նչ է պատահել մեզ:

**ԹԱՂԷՈՒԻՇ:** Բայց, իմ սիրելի, իմ թանկագին մանուկ, միթէ դու չես կարողանում համականալ, որ նեարդերդ խանգարւած են: Միթէ արդէն մոռացել ես, թէ ինչպէս լալիս էիր՝ մի շաբաթով ինձանից անջատւելու պատճառով:

**ԲՐՈՆԿԱ:** Օ՛, ոչ, նա բոլորովին ուրիշ ըանէր... Նա միայն երես տւած կնոջ տիրութիւն էր, մենակութեան երկիւղ ու սրտնեղութիւն, որ ես մի ամբողջ շաբաթ, երկակայիր, մի ամբողջ շաբաթ քեզ չըպիտի տեսնեմ:

**ԹԱՂԷՈՒԻՇ:** Իսկ հիմա, ինչ կայ հիմա: Զէոր ես քեզ հետ եմ, որ ու գիշեր քեզ հետ եմ:

**ԲՐՈՆԿԱ:** Իսկ քո հոգին մրտեղ է թափառում:

**ԹԱՂԷՈՒԻՇ:** Իմ հոգին: (Լրջովթեամբ): Միշտ և ամեն տեղ քեզ հետ է:

**ԲՐՈՆԿԱ:** (բուռն կերպով): Ինձ հէտ: Մի անգամ էլ կրկնիր, որ քո հոգին միշտ ինձ հետ է, միշտ:

**ԹԱՂԷՈՒԻՇ (ուժգին):** Միշտ! (Խորը մոտածմոնքի մէջ ընկած ման է զալիս սենեալի մէջ յետ ու առաջ):

(Բրօնկան հետեւում է նրա շարժումներին):

ԲՐՈՆԿԱ: Միշտ ինձ հէտ:

ԹԱՂԷՈՒԻՇ: Հաւատացնում եմ, որ առաջ էլ ես սարսափելի թախիծի մէջ էի ընկնում երբեմն, որ կեղեքում էր ուղեղու ու սիրուս:

**ԲՐՈՆԿԱ:** (արագովթեամբ ընդհատում է նրան): Թախիծի: Դու էլ թախիծ ես ունեցել: Ում համար կամ ինչի՞ համար է եղել քո թախիծը:

ԹԱՂԷՈՒԻՇ: Հանգստացիր, Բրօնուսիա, դու շատ լաւ գիտես, թէ ինչպէս քեզ սիրում եմ: Իմ թախիծը ոչոքի համար չի կարող լինել՝ բացի...

**ԲՐՈՆԿԱ (ծիչով):** Բացի... դէ ասա...

ԹԱՂԷՈՒԻՇ (զգելով նրան): Բացի... հէսց իրանից, թախիծից:

**ԲՐՈՆԿԱ (վեր կենալով):** Ի՞նչ! Թախիծ թախիծի համար: Ի՞նչ է նշանակում դա:

**ԹԱՂԷՈՒԻՇ:** Այդպէս մի զարմանայ: Թոյլ տնւը քեզ հետ հանգիստ խօսեմ: Նստիր, Բրօնեա, նստիր, իմ սիրելի, ես բոլորը կը պատմեմ քեզ... Թախիծ թախիծի համար... Հըմ... հըմ... Գիտես, երբ ես դեռ շատ երիտասարդ էի, թախիծից հողը փորում էի եղունգներով, տիրում էի մի ինչոր անյայտ բանի մասին, մի ինչոր մեծ, հզօր, գեղեցիկ գործ կատարելու ցանկութեամբ էի տոչորւած, այնպիսի մի գործ, որ ոչոք կատարած չը լինէր մինչև այդ:

**ԲՐՈՆԿԱ:** Կարելի է, ես քեզ խանգարեցի:

ԹԱՂԷՈՒԻՇ: Ո՛չ, ոչ, Բրօնկա, ոչ! Դա վաղուց է եղել, վաղուց... Այն ժամանակ ես ուժերի այնպիսի առատութիւն էի զգում, որ թւում էր, թէ ընդունակ եմ ամբողջ աշխարհը պարփակելու իմ մէջ... Հանձնանահանան...! Ես կլանում էի գիտութիւնը, քըքըում էի մարդկային գիտութիւնների զարաւոր գանձարանը, ման էի գալիս ամբողջ աշխարհում, որ իմ հոգու մէջ գծագրած ուխտը կատարեմ, որ մի մեծ գործ կատարեմ...

**ԲՐՈՆԿԱ:** Եւ ես, ես, մի աննշան կին, խանգարեցի քեզ այդ գործում:

**ԹԱՂԷՈՒԻՇ:** Օ՛չ, ոչ, հազար անգամ ոչ! Պատճառը բոլորովին ուրիշ է: Կազիմիրն ու ես մեր տոհմից վերջինն ենք: Կազիմիրը չը գիտէր, թէ թախիծը ինչ բան է. բայց կարելի է և գիտէր... Ես ոչինչ չը գիտեմ կազիմիրի մասին... (Մի րոպէ լրութիւն):

**ԲՐՈՆԿԱ:** Շարունակիր, շարունակիր:

**ԹԱՂԷՈՒԻՇ:** Այլիս ոչինչ չունեմ ասելու:

**ԲՐՈՆԿԱ:** Թաղեա, կարելի է ինձ հետ ամուսնանալով դու մոռացար քո թախիծը:

**ԹԱՂԷՈՒԻՇ:** Ի՞նչպէս պատասխանեմ քո հարցին: Ես... (կմկմալով) այնպիսի անզօրութիւն զգացի, ես այնպէս յոգնած էի, հիասթափւած, որ ծարաւի էի խաղաղութեան և հանգստութիւն էի որոնում:

ԲՐՈՆԿԱ: Առաջակում է, ես միայն մի պատահական բարձ էի քո չարատանջ գլխի համար:

ԹԱԴԵՈՒՇ (ախովը): Ինչի՞ դու, Բրօնկա, այդպէս կեղեքում ես ինձ:

ԲՐՈՆԿԱ: Ես չեմ կեղեքում քեզ, բայց իմ սիրալ մորմոքում է, երբ մտածում եմ, որ ես քեզ համար եղել եմ միայն զւարձութեան առարկայ, ես եղել եմ քո քմահաճոյքը, քո ընկերունին, որի հետ այնքան հաճելի էր ժամանակ անցկացնել այս դժոխային, անիծւած անկիւնում, բուխարու առաջ:

ԹԱԴԵՈՒՇ: Հանգստացիր, Բրօնկա, հանգստացիր: Ինչի՞ դու չես կարողանում հանգիստ լսել այն, ինչոր քեզ ասում են: Զեզոր ուզում էի ասել, որ քո մօր և քո շնորհիւ միայն իմացայ, թէ ինչ է հանգստութիւն ու երջանկութիւն, որ քեզ մօտ մոռացայ իմ թախիծը, որովհետև դու միայն կարողացար վերջ տալ նրան:

ԲՐՈՆԿԱ: (Երկար նայումէ նրան, յետոյ բռնելով նրա ձեռքերից): Բայց ինչի՞ դու սկսեցիր տխրել քո առաջւած թախիծի համար...

ԹԱԴԵՈՒՇ (մեղմ ժպիտով): Իսկ ինչի՞ դու հիմայ սկսել ես տխրել մի այնպիսի բանի համար, որի վերաբերմամբ առաջ ոչինչ չես զգացել: (Ընդմիջում):

ԲՐՈՆԿԱ: (մոտախոն կերպով): Այս, ճշմարիս է: (Մի լուպէից յետոյ): Քիչ առաջ հարցրիր, թէ ինչի՞ ես հիմայ այսպէս տխուր և յուզւած եմ,—հիմա, երբ դու վերաբերձել ես այդպէս կայտառ ու երջանիկ՝ այնպէս դժոխային տեսչանը զգալուց յետոյ... դեպի քո եւան:

ԹԱԴԵՈՒՇ (ապշած): Եւան:

ԲՐՈՆԿԱ: (այլեւա չը զսպելով իրան): Դէպի եւան, այս, եւան! Դու կարծում ես, չը նկատեցի, ինչպէս դու ցնցւեցիր, ինչպէս շշկւեցիր, երբ նա երեաց մեր տան շէմքում, դու կարծում ես, թէ ես միայն նրա համար եմ ստեղծւած, որ ծառայեմ քո քմահաճոյքներին, բարձ լինեմ քո տանջւած գլխի համար և ոչինչ չը զգամ,—չը զգամ այն սարսափելի թախիծը, որ քեզ խլում է ինձանից! (Ցնցումէ նրան եւ համարեա անզայացած): Թաղեա, ներիք ինձ. կարծեմ ես քեզ մեղագրում էի, որ թախիծ ունես... Գիտես ես իրաւացի չեմ մեղագրում քեզ, որովհետև իմ թախիծը վերադանցում է քո թախիծից:

ԹԱԴԵՈՒՇ (խորհրդաւոր կերպով): Բրօնկա, ինչի՞ մասին է քո թախիծը:

ԲՐՈՆԿԱ: (ուժգին թափով): Եւայի մասին, եւայի, եւայի!

ԹԱԴԵՈՒՇ (խորհրդաւոր կերպով): Ուրեմն թախիծը քեզ էլ համակել է:

ԲՐՈՆԿԱ: (զպիմը կախելով, թոյլ կերպով): Այս, ինձ էլ համակել է...

## 2 ԵՐԵՒԱՅԹ

ԿԱԶԻՄԻՐԸ Ներս է զալիս եւ նայում զարմացած:

ԿԱԶԻՄԻՐ: Դուք արդէն ոտքի վրայ էք, ինչի՞ այդպէս վաղ:

ԹԱԴԵՈՒՇ (աշխատելով հանգիստ երեւալ): Մենք իրաւունք ունինք նոյն հարցը քեզ առաջարկելու:

ԿԱԶԻՄԻՐ: Հըմ... Ես ամբողջ գիշերը կարդում էի. յետոյ մի փոքր թարմանալու համար՝ դուրս եկայ զրուանքի: Պուրակից վերադառնալու ժամանակ՝ դահլիճում լոյս նկատեցի ու զարմացայ. Ներս եկայ տեսնելու, թէ ինչ է պատահել. հիմա գնամ քնելու:

ԲՐՈՆԿԱ: Ոչինչ, ոչինչ չի պատահել: Ի՞նչ կարող է պատահել: Միայն ձեր այդ առեղծւածները կեանքի նպատակների, ինքնուրացման և անհասանելի բաների հետամուտ լինելու մասին, այնպիսի բաների, որոնք գուցէ իսկապէս գոյութիւն էլ չունին, այդ բուրը այնպէս քունս փախցրեց և վրդովեցրեց, որ ամբողջ գիշերը թաղեային չը թողի քնելու:

ԹԱԴԵՈՒՇ (հոգատար կերպով): Բրօնուախա, կարելի է հիմա կուզես պառկել (համբուրում է նրա ձեռքը): Գնա, Բրօնուախա, գնա, պառկիր: Գուցէ ես էլ մի քիչ քնեմ:

ԲՐՈՆԿԱ: (շտապով): Ոչ, ոչ... Դու էլ, կազեա, նոյնպէս մնա այստեղ. մեզ համար շատ հաճելի է քեզ հինելը...

ԿԱԶԻՄԻՐ (ակամայ ծիծաղումէ): Լսնեմ ես, թաղէուշ. հիմա, երբ դու այստեղ ես, Բրօնկային հաճելի է, որ ես ձեզ հետ լինեմ. Ես ձեզ համար ծառայում եմ, իբրև շիրմա կամ մի ուրիշ յարմար կարասի, որը ինքը գուշակում է—եթե կարելի է ներս գալ և երբ՝ դուրս գնալ:

ԲՆՈՆԿԱ: Անպիտման...

ԿԱԶԻՄԻՐ (Թաղէուշին): Իսկ երբ դու չը կայիր, նա ինձ անտանելի մարդ էր անւանում, որ տխրութեան և յօգնածութեան մթնոլորտ է մտցնում քո տունը, և շարունակ վազում էր պանսա Եւային արթնացնելու:

ԲՐՈՆԿԱ: (յանկարծ շինծու զարմանքով): Երեւակայիր քեզ, թաղէուշ, զարմանալի բան. բանի դու չը կայիր, եւան շարունակ քնի մէջ էր ընկած, ամբողջ օրերով քնում էր:

ԹԱԴԵՈՒՇ (ցրած մորով): Քննեմ էր... Ամբողջ

օրերով քննում էր: Հըմ... (Վեր է կենում եւ սենեակի մէջ ման է գալիս յետ ու առաջ): Գիտեմ, Կաղմարդիր, քո գործերը կաւածքի վերաբերմամբ իսկապէս շատ խճճւած են: Գուցէ որևէ թղթեր պակասում են կամ հաշիւները ձիշտ չեն: (Ուրախ): Լսիր, Բրօնկա, հագուցիր, կարգադրիր նախաճաշ պատրաստելու, ապա թող սահնակը լծեն,—հողմի պէս սլանանք դաշտերով ու անտառներով...

**ԲՐՈՆԿԱ:** Այն, այն... դաշտերով ու անտառներով... Մ'ի, ինչպէս գեղեցիկ կը լինի! (Մ'ի արագ շարժումով բաց է թողնում մազերը): Եւ այն հողմի մէջ իմ մազերը պիտի ծածանւին ահա այսպէս, նայիր, ահա այսպէս! (Գլուխը շարժելով մազերը փոռուի է, ապա նորից բուն շարժումով ոլորում նրանց ու արագութեամբ վեր թոշում տեղից): Եւ ահա այսպէս ամբողջ կրծքով ներշնչել դէպի մեզ սլացող երկնային տարածութիւնը: (Խորը հառաչումէ եւ ձեռքերը տարածում... յանկարծ խորամանկ ըրմծիծաղով դիմում է Թաղէուշին): Տես, ինչպէս զարմացած է Կազիմիրը. նա կարծում էր, թէ ես բոլորովին չը գիտեմ տիրել աղմկայոյդ փոթորկի կամ երկնային տարածութեան համար:

**ԿԱԶԻՄԻՐ:** Ընդհակառակը, ես ամենակին չեմ զարմանում, այլ նախանձում եմ այն մարդկանց, որոնց դեռ մատչելի են ցանկութիւնն ու թափիծը:

**ԲՐՈՆԿԱ:** Լսում ես, Թաղեա, ինչպէս միամիտ է սա. նախանձում է այն մարդկանց, որոնք ձգտում ու տիրում են! Սակայն, Թաղեա, գնա, արա, ինչ հարկաւոր է. դու շնուր կը վերջացնես, չը:

**ԹԱՂԻՇՈՒՇ:** Կէս ժամից աւելի չի տեիլ.

**ԲՐՈՆԿԱ (շինծու կերպով):** Իսկ ես այդ ժամանակայ ընթացքում Կազիմիրն տիրիլ ու ձգտիլ կը սովորեցնեմ:

**ԹԱՂԻՇՈՒՇ:** Լաւ միտք է, լաւ միտք: (Դուրս է գնում):

### Յ ԵՐԵՒՈՅԹ

**ԲՐՈՆԿԱ և ԿԱԶԻՄԻՐ:**

**ԲՐՈՆԿԱ (մօտենուածէ այն դուն վարագոյրին, որից դուրս էր զնացել Թաղէուշը, դուրս է նայում դոնից, ապա վերադառնում Կազիմիրի մօտ եւ ըրունում ձեռքից):** Գիտեմ, նա հիմա ուր զնաց: ԿԱԶԻՄԻՐ, Գիտեմ:

**ԲՐՈՆԿԱ:** Դու գիտեմ: Դու չես կարող այդ իմաստ: Դու կարծում ես, թէ նա բրեկը քոնը չի եղել. այդ էր պատճուը, որ այնքան տիրուր էի: Իմ սաստիկ վիշտը ես սքողում էի ձանձրոյթի և անտարբերութեան դիմակով, որ սակայն միշտ չէր աջողութեան: Բայց յոյս ունէի, թէ ամպերը կը ցրւին...

**ԿԱԶԻՄԻՐ:** Գիտեմ, որ չէ: ԲՐՈՆԿԱ (ուժգին): Եւայի մօտ զնաց նա, Եւայի, Եւայի! (ընդմիջում): Հէնց այդպէս էլ պիտի լինի: ԿԱԶԻՄԻՐ: Համար համար էլ պիտի լինի: Այդպէս է մարդու վիճակը: Երբ նրան համակում է այնպիսի մի սարսափելի թափիծ, որի շնորհիւ մարդ փախչում է ինքն իրանից և բոլոր շրջապատղներից... ոչ մի ուրախութիւն, ոչ մի զւարճութիւն ու վայելք չի լցնի նրա հոգու դատարկութիւնը, նա չի կարողանայ խեղդել իր մէջ այդ յուզմունքը, սանձահարել այն կատաղի ձըդտումը, որ նրան կուրօրէն մղում է իր զոհերի վրայով յառաջ ու յառաջ:

**ԲՐՈՆԿԱ (վախեցած):** Ուրեմն դա աւելի ուժեղ է՝ քան փոթորիկը, որ արմատախիլ է անում դարաւոր կաղնիները:

**ԿԱԶԻՄԻՐ:** Աւելի ուժեղ է:

**ԲՐՈՆԿԱ:** Անյաղթելի է:

**ԿԱԶԻՄԻՐ:** Ոչ:

**ԲՐՈՆԿԱ (խսրանդաւոր):** Բայց նա Եւայից էլ ուժեղ, այնպէս չը:

**ԿԱԶԻՄԻՐ (զլուխը շարժելով):** Դժբաղդաբար, ոչ:

**ԲՐՈՆԿԱ (վեր թողելով տեղից):** Ոչ, ասում ես —ոչ: (Յուսահատութեամբ): Ասա ինձ, ինչի՞ ոչ, ինչի՞ ոչ:

**ԿԱԶԻՄԻՐ:** Որովհետեւ հէնց Եւան է նրա թախիծը: Նա, սակայն, նրա համար չի տիրում. նա կարող է բոլորովին չը տեսնել նրան, ոչինչ չիմանալ նրա մասին, բայց վերջինս կարծես—նրա մէջ լինի, կարծես կեղեքում է նրա նկրսը, կարծես կատաղի կերպով հաւածելով՝ խարազանում է նրան...

**ԲՐՈՆԿԱ:** Ինչի՞ համար, ասա ինձ, ինչի՞:

**ԿԱԶԻՄԻՐ:** Այդ ոչնք չը գիտէ, ոչնք չի իմացել, չի հասկացել և չի հասկանայ: (Ծնդմիջում):

**ԲՐՈՆԿԱ:** Ինչ անեմ ես, դժբաղդու: Ո՞հ, ես էլ վիշտ ունիմ, ես էլ տեսնչանք ունիմ նրա հոգու համար: Տէր Աստուած! ինչպէս ես կուր եմ եղել! ինչպէս իմ հոգին կուրացել էր սիրուց, ես միայն հիմա իմացայ, որ նա երբէք իմը չէ եղել:

**ԿԱԶԻՄԻՐ (տիրուր կերպով):** Լսիր, Բրօնկա, ես չէի ուղում քո աչքերի ծածկոցը պոկել: Ես գիտէի, լաւ գիտէի, որ նա բրեկը քոնը չի եղել. այդ էր պատճուը, որ այնքան տիրուր էի: Իմ սաստիկ վիշտը ես սքողում էի ձանձրոյթի և անտարբերութեան դիմակով, որ սակայն միշտ չէր աջողութեան: Բայց յոյս ունէի, թէ ամպերը կը ցրւին...

**ԲՐՈՆԿԱ:** Ինչի՞ դու իսկոյն չասացիր ինձ քո այդ կարծիքը: Ես ժամանակ կունենայի ուշքի գալու, պաշելու. իսկ հիմա այդ բանը ինձ շանթահարեց. հիմա

իմ հոգին կարծես ուռենի լինի՝ կայծակից ջարդ ու փշուր եղած և հազարաւոր տաշեղների վերածւած, որ ցըւած են նրա այլանդակւած արմատների շուրջը: Ինչի՞ դու ինձ չես ասել: Ինչի՞ դու իմ աշքերը չես բացել:

**ԿԱԶԻՄԻՐ:** Համբերութեամբ լսիր ինձ Բրօնկա, և կիմանաս, թէ ինչի:

**ԲՐՈՆԿԱ:** Կազեա, ինչի՞ դու այդպէս տարօրինակ ես դարձել, ինչ է պատահել քեզ:

**ԿԱԶԻՄԻՐ:** Ի՞նչ է պատահել ինձ: Դու առաջին անգամն ես նկատում այն, ինչ որ մի ամբողջ շաբաթ առաջ պիտի իմանայիր:

**ԲՐՈՆԿԱ:** (երկիրով եւ ուշադրութեամբ նայում է) աշքերը սեւեռած նրա վրայ):

**ԿԱԶԻՄԻՐ:** Մի գախենայ, Բրօնկա, ոչ մի սարսափելի բան չը կայ... Ես կասեմ քեզ պարզ ու բացարձակ: Աստիճանաբար, երկար շաբաթների ընթացքում, ես սիրեցի քեզ իմ առաջին սիրով, որովհետև ես դեռ ոչոքի չէի սիրել: Օ՛, իմ սիրով սառն է եղել, ճերմակ ու մաքուր, ինչպէս այն դաշտերի ձիւնը: Թէ ինչի՞ ես քեզ սիրեցի, ինչի՞ իմ սէրը ամբանում էր ժամ առ ժամ, աճում էր իմ մէջ աւելի ու աւելի ուժեղ—դա կարելի է ինքդ հասկանաս այն բոլորից, ինչ որ քեզ պատմել եմ իմ մասին: Սակայն դա միենոյն է: (Նայում է) մեղմ քմիջաղ տալով): Միայն այդպէս գախեցած մի նայիր: Դու կարող էիր այն դէպքում երկիրովի խուսափել և փախչել այստեղից, եթէ ես յօյս ունենայի քո փոխադրաւոթեան վրայ: Բայց ես ոչ միայն այդ յօյաը չունիմ, այլ նոյն իսկ չեմ ցանկանում քո փոխադրձ սէրը: Եթէ իմանայիր, որ դու պատասխանում ես իմ զգացմունքներիս, այն ժամանակ մի ըոպէ, անգամ չէի տատանւի և արհամարհանքով կը մերժէի քո փոխադրձ սէրը, ոչ թէ այն պատճառով, որ դու իմ հարսն ես, այլ որովհետև քո հոգին յարակել է մի հոգու հետ, որն աւելի ուժեղ է՝ քան իմը:

**ԲՐՈՆԿԱ:** Սպասիր, Կազեա, ես չեմ հասկանում քեզ:

**ԿԱԶԻՄԻՐ** (յոգնած կերպով): Մէկը միւսին չի խանգարում: Ես կարող եմ գիշերցերեկ մտածել քո մասին, սիրել ու փայփայել. կարող եմ չը մտածել որ դու իմ եղբօր կինն ես, և միենոյն ժամանակ մի վայրկանով անգամ, նոյն իսկ մի թոռցիկ մտքով չարատաւորել իմ նախնիքների տան տիկնոջ և իմ եղբօր կնոջ պատիւը, եղբօր, որին քեզանից պակաս չեմ սիրում:

**ԲՐՈՆԿԱ:** (մօտենում է նրան և հանդարտ շոյում նրա մազերը): Մի խօսի դրա մասին, այլես մի խօսի:

**ԿԱԶԻՄԻՐ:** Ի հարկ է, դու այլես չես լսի իմ սիրով մասին. բայց կը հասկանաս, արդեօք, իմ վիշտը, մի մարդու վիշտ, որ այնքան երկար ապրել է այն նեխտած ճահճի տիղմում, որ յայտնի է աշխարհը և կեանք անուններով: Ես ուղեցի բռնկլ այն շրջմոլիկ հուրը, որ մոլար թափառում է կեանքի ճահճային տիղմի վրայ. ես էլ ուղեցի կեանքը վայելել «սիրում եմ» խօսքով: (Ընդմիջում): Միմեանց ձեռքեր բռնած երկուսն էլ նստում են: Երկար լուղմինից յետոյ):

**ԿԱԶԻՄԻՐ:** Ես երջանիկ եմ, որ կեանքիս հետ այսպէս գեղեցիկ կերպով վերջացնում եմ հաշիւներս... ես միայն մի հոգս ունիմ. ինչպէս դու այդ բանը կը տանիս:

**ԲՐՈՆԿԱ:** (վախեցած եւ շշմած): Ինչը կը տանիմ, ինչը:

**ԿԱԶԻՄԻՐ:** Լսիր, Բրօնկա, վերջին օրերս ես հըրձանքով դիտում էի, թէ ինչպէս քեզանում աճում, ոգի էր առնում մարդը, ինչպէս դու մարտնչում էիր ինքդ քեզ հետ, ինչպիսի սարսափելի դժւարութեամբ բացատրում էիր ինքդ քեզ այն բոլորը, ինչոր նիրհում էր քո հոգու խորքում: Ես հրձանքով դիտում էի այդ բոլորը ոչ իբրև սիրող մարդ, այլ իբրև արւետագէտ, որովհետև դու ստեղծում էիր նոր խօսքեր այդ բոլորի համար, ինչ որ երկունքով ծնում էր քո հոգին... Բրօնկա, եղիր հզօր ու գեղեցիկ, բռնիր այն սրից, որ պատրաստ է ջախջախելու քո գլուխը:

**ԲՐՈՆԿԱ:** (զայրացած): Ո՞վ կարող է իմ գլուխը ջախջախել:

**ԿԱԶԻՄԻՐ** (յորովի): Թագէուշը բռնը չի եղել և չի լինի: Նրա հոգին կը հեռանայ քեզանից, իսկ եթէ ուղում ես դիակը ունենալ քեզ մօտ, ունեցիր:

**ԲՐՈՆԿԱ:** Մհւր ես խօսում:

**ԿԱԶԻՄԻՐ** (վշտագին): Եթէ ես ձգտէի ձեռք բերելու քո փոխադրձ սէրը, այն ժամանակ դուցէ և դիմէի այնպիսի ստոր միջոցների. Եթէ ես չը սիրէի քեզ, եթէ ուրիշ արիւն հոսէր իմ մէջ, գուցէ և ուրախանայի, որ առիթ կայ քո սիրով խոցելու: Մինչև հիմայ այդ բոլորի մասին չեմ ասել քեզ, թէկ բոլորը դիտէի. բայց հիմա, երբ այլես ոչինչ չի կարելի փոխել, ես կը ցանկայի ամրապնդել քո հոգին...

**ԲՐՈՆԿԱ:** (կիսազգայացած նայում է) Կազիմիրին մոլար հայեացըով): Լաւ, ուրեմն ես կը լինեմ հզօր ու գեղեցիկ, բայց դնւ... դնւ ինձ կօգնես:

**ԿԱԶԻՄԻՐ:** Ինչով կարող եմ օգնել քեզ:

**ԲՐՈՆԿԱ:** (կիսախեղդւած նէշինով): Ես կը սպանեմ եւային, կը սպանեմ, կը սպանեմ, և դու պիտի օգնես ինձ!

**ԿԱԶԻՄԻՐ:** Ե՞ս—ոչ:

**ԲՐՈՆԿԱ.** (արհամարհանքով ծիծաղելով): Եւ դռւ,  
դու ինձ հետ խօսում ես սիրոյ մասին: Դու, որի խօս-  
քերում ես պատրաստականութիւն էի տեսնում ամեն  
բան անելու ինձ համար, ամեն գոհողութիւն յանձն  
առնելու, դռւ հիմայ խուսափում ես:

**ԿԱԶԻՄԻՐ:** Ես ոչ թէ խուսափում եմ, այլ չեմ  
հասկանում, թէ ինչի՞ համար մասնակցեմ այդպիսի  
աննպատակ և անմիտ ոճագործութեան, որը կարող է  
թելադրել միայն էգի բնազումը և ոչ թէ կնոջ խսկա-  
կան ոյժը և գեղեցկութիւնը:

**ԲՐՈՆԿԱ.** (աւելի եւ աւելի զրգուելով եւ բուռն  
կերպով): Այ մարդ, ինչ ես ասում, մբթէ դու սիրու  
ու արիւն չունես: Ասա ինձ, ինչպէս ես դու սիրում  
կամ ինչով ես սիրում: Քո այդ սէրը քեզ համար մի-  
նենոյն է թէ գեղեցիկ խօսքերի հնչիւններով ինքնա-  
խարէութեան մէջ ընկնել կամ ցնորըների և միրաժ-  
ների մէջ ընկած ինքնամոռացման ենթարկւել:

**ԿԱԶԻՄԻՐ:** (հայեացը յասուծ նրա վրայ): Քո  
խելագար ցաւն է խօսում քո տեղ: Սակայն դու իրա-  
ւացի ես, ես ընդունակ չեմ կամ, կարելի է, չափա-  
զանց ուժեղ եմ ձեր արիւնածարաւ սիրոյ համար՝ իր  
արիւնածարաւ առաքիւնութեամբ ու արիւնածարաւ ոճ-  
ագործութիւններով: (Վեր է կենում եւ յամրաքայլ  
ուղղումէ դէպի դուռը: Բրոնկան նայումէ նրա յե-  
տելից, ապա՝ մօտ վազելով բռնում է ձեռքերից եւ  
յետ բերում սենեկալը):

**ԲՐՈՆԿԱ:** Մի գնա, մի գնա, իմ միակ եղբայր-  
տեսնում ես, ես արդէն ուշքի եմ եկել, խելօքացել եմ.  
դռւ, միայն դռւ թափանցեցիր իմ հոգին: Տեսնում ես,  
կազեա, ես էլ հոգի ունիմ, թէկ տանջւած ու տրոր-  
ւած, բայց և այնպէս բաւականաչափ ուժեղ և ընդու-  
նակ ըմբռնելու քո խօսքերի ամբողջ գեղեցկութիւնն  
ու բարութիւնը, պարփակելու գէթ մի մասը քո թա-  
խիծի և քո վիշտի: Պարզ կերպով ասա, կազեա, չէոր  
դու էլ թախիծ ունիս:

**ԿԱԶԻՄԻՐ:** Հիմա ոչ, հիմա ոչ: Քեզանով վերջա-  
ցաւ իմ թախիծը:

**ԲՐՈՆԿԱ.** (անգիտակցաբար կրկնելով): Ինձա-  
նով... ինձանով... ինձանով... (Յանկարծ ուրախ եղա-  
նակով): Կազեա, դու խսկապէս ասացիր, որ սիրում  
ես ինձ:

**ԿԱԶԻՄԻՐ (մտախսն):** Ասացի:

**ԲՐՈՆԿԱ:** Եւ ասացիր, որ դու չափազանց մա-  
քուր ու հապատ ես և մի վաղանցուկ մտքով անդամ—  
ցանկասիրութեան մասին— չես արտաւորիլ քո նախ-  
նիքների տան տիկնոջ և քո եղբօր կնօջ պատիւը:

**ԿԱԶԻՄԻՐ:** Ասացի, և դա իմ հոգու ողջ իմաստն է:

**ԲՐՈՆԿԱ.** (յանկարծ բռնում է նրա ձեռքերից):

Օ՛, եղբայր իմ! (փարումէ նրա պարանցին, սեղ-  
մում է նրա զլովիր իր կրծքին, ապա ինքնամոռու-  
ցովթեան մէջ թերում է կազիմիրի ուսի վրայ): Իմ  
հոգին այնպէս ուժասպառ է եղել, այնպէս ուզում է  
նիբիւլ. այնպէս կը ցանկայի, որ ինձ օրօրէիր, օրօ-  
րէիր անվերջ—մինչև յաւերժական խաղաղ քունը,  
որովհետեւ դու անվերջ բարի ես, անվերջ... (Յանկարծ  
պոկտումէ նրանից): Կազեա, դու գիտես թէ ես ինչ եմ:  
**ԿԱԶԻՄԻՐ:** Գիտեմ:

**ԲՐՈՆԿԱ:** Ասա ինձ, ասա, ինչ եմ ես:

**ԿԱԶԻՄԻՐ:** Ճերմակ ու մաքուր ձիւն, որ թափ-  
ւում է սառած գետնի վրայ և տաքացնում, փայփայում  
է այդ գիտակը իր գրկի մէջ, մինչեոր նա կենդանա-  
նայ և զարթնի, մինչեոր երկրի տաքուկ ծոցից հա-  
տիկները, որ թւում էին սառած ու մեռած, սկսին նոր  
ու թարմ ընձիւլներ տալ:

**ԲՐՈՆԿԱ (մտախսն):** Բայց թւում էր թէ ցանած  
հատիկը արդէն սառել է գետնի մէջ:

**ԿԱԶԻՄԻՐ:** Սառել է ցրտից, վթել է ճահճի մէջ...

**ԲՐՈՆԿԱ:** Հատիկը բողբոջներ է տալիս, իսկ  
ձիւնը հալում է... Դու ճշմարիտ ես ասում, ես ձիւն  
եմ: (Յանկարծ վեր է թոշում տեղից): Ինչի՞ եւան  
ընած չէ: Լսում ես: (Կազիմիրը ականջ է դնում):

**ԲՐՈՆԿԱ:** Լսում ես, նա սանդուխքով վար է իջ-  
նում... Մի բառէ յետոյ այստեղ կը լինի: (Յանկարծ  
շինծու կերպով ուրախ տրամադրութեան մէջ ընկնե-  
լով): Ա՛խ, կազեա, ինչպէս տարօրինակ կերպով ես  
ուրախ ու երջանիկ եմ: (Բոնելով ուսերից եւ աշխա-  
տելով տարուքերկ նրան մի կողմից միաը): Օր-օր,  
օր-օր, իմ մասուկ, օր-օր!... Դէ քնիր, վերջապէս, յա-  
մառ մասուկ! (Դուն չէմքում երեւում է եւան եւ ու-  
րախ ճեւանալով նայումէ այդ տեսարանին):

#### 4 ԵՐԵՒՈՅԹ

**ԲՐՈՆԿԱ (նայելով եւային):** Օ՛ր-օր, օր-օր, իմ  
փոքրիկ դէ որ չես ուզում քնել, գոնէ պաննա եւային  
ասա—բարի առաջու:

**ԿԱԶԻՄԻՐ (շինծու ուրախութեամբ):** Բարի առա-  
ջու:

**ԲՐՈՆԿԱ (ողջունելով եւային):** Տես, եւա, ինչ-  
պէս մենք բոլորս այսօր շնու ենք վերկացել: Ինձ  
թւում է, թէ այսօր Ծնունդ է: Մեզ մօտ սովորութիւն  
կար, որ այդ օրը բոլոր երեխաներին ձաղկիչներով էին  
արթնացնում. այդ պատճառով մենք արագութեամբ  
վեր էինք թոշում անկողիններից:

**ԵՒԱ:** Զէոր այդ բանը աւագ ուրբաթ է լինում  
կամ շաբաթ:

**ԲՐՈՆԿԱ:** Ե՞ն, դա միևնոյն է... Նայիր միայն իմ այս մեծ ու բարի արջին: Այս, դու իմ բարի Կազմիր!...  
ԿԱԶԻՄԻՐ: Բրօնկան այսօր արթնացել է գերազանց տրամադրութիւնով:

**ԲՐՈՆԿԱ:** Դու ճշմարիս ես ասում... Ինձ թւում է, թէ ես դեռ փոքրիկ երեխայ եմ և բարձրանում եմ այն կաղամախու բարձր գագաթը, որ կախւած է անիծւած սև լճակի վրայ:

**ԵՒԱ:** Դարձեալ այն սև լճակը:

**ԲՐՈՆԿԱ (Ճեղող շարժելով):** Ե՞ն, միևնոյն է, լճակ լինի, թէ ոչ, ածիւի լինի թէ կախաղան, գնացքի անւը, թէ օրինակ, ամենաբնական ձեռվ իր անկողնում: Մահը մաս է, միևնոյն է—ինչպէս և որտեղ լինի: (Յանկարծ ընդհատելով): Նայիր միայն, Եւա, այս բարեսիրու Կազմիրը նման չէ բազմաճիւղ կաղամախու կամ իմ հսկայ հօրեղբօրը, որի ուսերին ես այնքան յաճախ թռչուում էի, քիչ էր մնում վիզս կոտրէի:

**ԵՒԱ:** Ինչի՞ դու այդպէս ուրախ ես:

**ԲՐՈՆԿԱ (սիրապիր կերպով ըռնումէ նրա ճեղից):** Գիտես, Եւա, յաճախ ինչոր յիմար նախազզացումներ ծանրանում են ինձ վրայ, որոնցով ես թռչուուրում եմ թէ իմ և թէ ուրիշների կեանքը. բայց երբ այդ բոլորը անցնում է, ես կրկնակի ուրախ եմ լինում: (Մի քիչ յոզնած): Բայց նայիր այս Կազմիրին. սա ոչնչի պէտք չէ: Այս, Կազեա, ինչպէս տխուր ես դու, ինչպէս տխուր!... Եւա, գիտես ինչ, արի միասին վազենք գնանք պարտէզը: Այստեղ ձիւնը մինչև գոտի է հասնում: Այս, ինչպիսի բաւականութիւն է թափառել այդպիսի ձիւնի մէջ, նրան փորել կրծքով և ոտներով, որ շուտով գալարի այն մեռած, բայց հիմա արգէն մի քիչ ջերմութիւն ստացած աշնանցանը:

**ԵՒԱ:** (իբրեւ թէ ուշադրութիւն չը դարձնելով, ներդաշխ կերպով): Բրօնկան էլի ճարագնիքի բաներ է անում: Հիմա կարելի է միանալ, անում մի մաս է առաջանալ: Հիմա կարելի է ձիւնի մէջ մտնել, առաւօտեան հագուստով և տուֆլիներով:

**ԲՐՈՆԿԱ:** Դրանից թնչ: Ես ընտելացած եմ, իսկ դու արդէն հագնւած: Գնանք, թանկագին Եւա, դու այնպէս շուտ մրսող ես. ես քեզ ձիւնի մէջ կը տաքացնեմ: Ձիւնով ես կը տրորեմ քո երեսը, ձիւնով կը լւած քո մազերը. այս, եթէ իմանայիր թէ ինչպէս ձիւնը շոյում, տաքացնում է սառած ձեռքերն ու պաղած սիրտը...

**ԵՒԱ:** Ո՞չ, Բրօնկա (նոյն քողարկած, խոնրդաւոր ժպիտով): Ձիւն պէտք չէ ինձ. ինձ համար լաւ են իմ սառած ձեռքերը և պաղած սիրտը: Իմ հոգին տաքացնելու համար ձիւն պէտք չէ դեռ ես:

**ԲՐՈՆԿԱ (ուշադրութիւնը նայումէ նրան):** Ո՞չ, իսկապէս ոչ: Ուրեմն դու արի, Կազեա, միասին վա-

զենք, ընկնենք ձիւնի մէջ. բայց դու թոյլ կը տաս քեզ վայր զցելու ձիւնի մէջ: Ինչպիսի հրաշալի ձնէմարդ դուրս կը բերեմ քեզանից! (Ճեղործի շարժուսներով ցոյց է տալիս ձեւը): Այստեղ երկու կտոր ածուխ կը կուսեմ—դրանք կը լինին քո աչքերը. այստեղ մի քարի կտոր կը դնեմ—կը լինի քիթ. իսկ այստեղ ահա այնպէս կանեմ, կը լինի շրթունքներ. բերանդ էլ ծխաքարը կը դնեմ: Այս, Եւա, Եւա, ինչի՞ դու չես ուզում մեզ հետ գալ: Դէ, արի, Կազեա, արի: (Քարշում է իր յետելից Կազմիրին): Եւա, այս բոպէին Թագէուշը այստեղ կը գալ: (Կազմիրի հետ միասին դորս է վազում նախանենեակ: Բրօնկայի ճայնը նախանենեալից: Թագէուշ, Թագէուշ, Եւան մնանդ է, մեզ համար նախանաշաղից պատրաստեցէք:

### 5 ԵՐԵՒՈՅԹ

Եւան միայնակ մօտենում է պատուանին, մի բոպէի չափ նայում է պատուանով՝ մասներով թմականարելով ապակու վրայ. ապա սառն ու մոայ մօտենում է բուխարուն, ունեմիրավ խառնում է կրտէլ եւ նստում անշարժ, աջ՛ը յատելով կրտին:

### 6 ԵՐԵՒՈՅԹ

Ներս է դալիս Թագէուշը, նայում է սևնեակի չորս կողմը, ապա մօտենում է Եւային, վերցնում բազկաթոռը եւ նստում նրա մօտ:

ԹԱԴԵՈՒԻՇ. Բարեւ տալ պէտք է քեզ:  
ԵՒԱ (լրում է):

ԹԱԴԵՈՒԻՇ. Կարելի է իմանալ, թէ ով էր կանչում ինձ:

**ԵՒԱ:** (թմրած բարձրացնումէ գլուխը): Բրօնկան էր կանչում: Նա առաւօտեայ հագուստով և տուֆլիներ հազած՝ Կազմիրի հետ միասին գուրս վազեցին ձնագնդի խաղալու... Ասում էր—որքան հաճելի է՝ մինչև գոտի խրւիլ ձիւնի մէջ, կուրծքով ցըել ձիւնի ալիքները... Դու չես վախենում, որ նա մըսէ:

ԹԱԴԵՈՒԻՇ (կարծես ընի մէջ): Միհնոյն է:

**ԵՒԱ:** Խանդ չես զգում գէպի Կազմիրը Բրօնկայի վերաբերմամբ:

ԹԱԴԵՈՒԻՇ (նայում է նրան ոչինչ չը պատասխանելով):

**ԵՒԱ:** Ո՞րտեղ էիր քիչ առաջ:

ԹԱԴԵՈՒԻՇ: Իմ մնանաւորութեան մէջ, ինքս ինձ հետ:

**ԵՒԱ:** Ինձ հետ, ինձ մծաւ:

ԹԱԴԵՈՒԻՇ (ըարկացած): Ասում եմ քեզ, որ ինքս ինձ հետ էի!

**ԵՒԱ:** (շյում է նրա ծեռը): Ինչի՞ քեզ այդպէս կատաղեցնում է այն հանգամանքը, որ դու այսուհետեւ պէտք է միշտ լինես ինձ հետ և ինձ մօտ:

ԹԱԴԵՈՒԻՇ. Քեզ հետ լինել: Քեզ մօտ լինել: Մայս հարիւր անգամ աւելի լաւ է:

**ԵՒԱ.** (մոտախոհ): Երբ ես մտայ քո տունը. . Ո՞հ, ոչ, ես այդ չէի ուզում ասել: Այն, այն բոպէն... Միայն մի բոպէ էր... Երբ դու վերադարձար, ես կանգնած էի ահա այն սենեակում. թէն չէի լսում ձեր խօսակցութիւնը, բայց զգում էի, որ դուք երջանիկ էք, —և ես մի բոպէի չափ տատանմունքի մէջ ընկայ—ոտք կոխել, արդեօք, ձեր երջանկութեան և հանգստութեան սրբութիւն սրբոցը, թէ՞ ոչ:

**ԹԱԴԵՈՒԻՇ** (կարծես զարթնելով քնից): Ո՞ւր է Բրոնկան:

**ԵՒԱ.** Բրոնկան իր կամքով գնացել է ձիւմը փողելու և ցրիւ տալու, որ քո սպառած հոգու մէջ ցանած աշնանացանը շուտով աճի:

**ԹԱԴԵՈՒԻՇ** (անվճողական կերպով նայում է նրան, ապա՝ կրակին եւ յանկարծ հարցնումէ): Ասա ինձ, ի՞նչ ես ուզում դու:

**ԵՒԱ.** (կորովի): Ի՞նչ: Դու գեռ չը գիտես ի՞նչ: (Մի բոպէ ընդմիջում):

**ԹԱԴԵՈՒԻՇ:** Դա երբէք չի լինի! (Կատաղի): Աւելի շուտ ես քո զիւլսը կը ջարդեմ, կը կոխկոտեմ քեզ, ինչպէս մի սողունի. հէնց քեզ համար հալումազ լինելով, անիծւած գե, աւելի շուտ ես կը ջախջախեմ իմ ձակատը՝ քան թոյլ կը տամ, որ այդ բանը կատարեի!

**ԵՒԱ.** (յափշտակած եւ հրճանքով նայում է նրան): Ինչպէս դու գեղեցիկ ես, երբ սիրում ես ինձ այդպիսի խելագար ուժով!

**ԹԱԴԵՈՒԻՇ** (քննում է նրա ծեռքից): Ես քեզ աշտում եմ!

**ԵՒԱ:** Այդ էլ գիտեմ: Հէնց միայն այդ պատճառով էլ աւելի եմ սիրում քո սէրը:

**ԹԱԴԵՈՒԻՇ:** Ես չեմ բացասում իմ սէրը, չեմ բացասում իմ թախիծը քո վերաբերմամբ, բայց այդպիսի զոհաբերութիւն ես քեզ չեմ անի: Եւ երդում եմ քո առաջ, որ դա երբէք չի լինի, երբէք:

**ԵՒԱ:** Պիտի լինի!

**ԹԱԴԵՈՒԻՇ** (շշմած, խեղդուծ ծիչով): Երկին անգամ ասում եմ—երբէք, երբէք!

**ԵՒԱ.** (անշարժ, լայն բացած աչքերով): Հէնց այսօր կը կատարեի! (Կօրրիդօրից լսում է երկու վիճող ձայնների աղմուկ):

**ԹԱԴԵՈՒԻՇ** (ականջ է դնում): Այս ի՞նչ է նշանակում: (Զանգանարում է: Մի քիչ յետոյ ներս է գալիս սպառառը):

## 7 ԵՐԵՒՈՅԹ

**ԹԱԴԵՈՒԻՇ:** Ի՞նչ աղմուկ ու վէճ է:

**ՍՊԱՍԱԿՈՐ:** Պարոն, մի ի՞նչ որ կին է եկել և թախանձագին ուղղում է տեսնել տիրուհու հետ:

**ԹԱԴԵՈՒԻՇ:** Ի՞նչի՞ չասացիր, որ խոհանոցում սպասէ:

**ՍՊԱՍԱԿՈՐ:** Ասացի, բայց նա չի ուզում խոհանոց գնալ, Նա ասում է, որ ի՞նքը տիրուհու համար միենոյն է թէ հարազատ մայր...

**ԹԱԴԵՈՒԻՇ** (շփում է ճակատո): Ներս թող նրան: (Սպասատրը դուրս է գնում: լուլթիւն):

## 8 ԵՐԵՒՈՅԹ

Ներս է գալիս մը անձանօթ կին, մոայլ կերպով նայում է շուրջը, ապա խօսում է հանդիստ՝ առանց բաշելու:

**ՄԱԿՐԻՆԱԱ:** Ինձ չէին ուզում ներս թողնելու, հրամայում էին խոհանոցում սպասել, բայց ես իրաւունք ունիմ մտնելու այս տունը հէնց այն դռնով, որով մտնում են պարոնները, թէկուզ այս աշխարհի ամենից ուժեղները:

**ԹԱԴԵՈՒԻՇ** (ապշած մօտենում է նրան): Այդ ի՞նչ է նշանակում:

(Եւան մէջքը դէպի Թաղէուշն ու Մակրինան կանգնած՝ փոթկալով բարձրածայն քրքում է):

**ԹԱԴԵՈՒԻՇ** (չը լսելով նւայի քրքի՞ը, երկիւղով քննում է Մակրինայի ծեռքը աստիճանաբար սաստկացող սարսափով): Շուտ ասացէք, այս ի՞նչ է նշանակում:

**ՄԱԿՐԻՆԱԱ** (մատով ցոյց տալով նւային խօսում է շատ հանգիստ, լուրջ ու ազդու կերպով): Ես ճանաչում եմ այս օրիորդին, նա էլ ինձ է լաւ ճանաչում: (Եւան վերջ տալով ծիծաղին՝ յանկարծ դասնում է դէպի նա. Երկուան էլ աչքերով շափում են միմանց): Թոյլ տէք ինձ այստեղ, այս անկիմում նստել ու սպասել իմ տիրուհուն: Ձեր ամուսինը մեր ամենասիրելի մանուկն է, որին և պահել, մեծացրել ու դաստիարակել եմ: (Նստում է դրան մօտ, անկիմում: Թադէուշը յետ է քաշում դէպի նւան, որը նորից դարձել է դէպի բովարին եւ չի նկատում նրան: Յանկարծ ներս է վազում թրօնկան, ամբողջովին ձիւնամաթափի, նետում է դէպի Թադէուշը եւ ուժգին գրկում է նրան):

## 9 ԵՐԵՒՈՅԹ

**ԲՐՈՆԿԱԱ:** Տաքացրու ինձ, Թաղեա, զցիր ինձ կրակի մէջ, ես սառել եմ մինչև ոսկորներս! Թաղեա, տաքացրու ինձ:

**ԹԱԴԵԱԱ** (ազատւելով նրա գրկից): Այ, քո դաշեակը եկել է:

**ԲՐՈՆԿԱԱ** (ապշած, ցնցւելով հեռանում է Թադէուշից, նայում է իր շուրջը եւ յանկարծ նկատելով Մակրինային, որը վեր է կացել նստած տեղից՝ նետում է դէպի նա): Դռւ, դռւ, անզուգական իմ սիրելի մայրիկ! Ա՞ի, ինչպէս լաւ է, եկել ես! Ո՞հ, ինչպէս լաւ է, որ դու արդէն այստեղ ես...

**ՎԱՐԱԳՈՅԹ**

# IV ԱՐԱՐԻԱԾ

## 1 ԵՐԵՒՈՅԹ

Պատուհանի առաջ, ձմեռային երեկոյի մթսաշաղին, սպիտակին է տալիս ծինը: Յամբաքալ ներս է մտնում թթօնկան, ցաւատանց ու ծնչւած՝ ծնոքին մի տրորած նամակ՝ մտնում է պատուհանին, երկար նայում է պուրակին (պարկ), ապա նամակը բանում է, ծնոքերով հարթում եւ կարգում մէջը դարձրած դէպի հասարակութիւնը:

**ԲՐՈՆԿԱ.** (Կարդում է մեղմ ճայնով): «Իմ միակ, իմ չքնար Բրօնկա»... (Ընդհատելով՝ ծեռքերը ցած է թողնում, ապա արտասևելով): «Իմ միակ Բրօնկա»... Տէր-Աստւած... Այն, ճշմարիտ է, ճշմարիտ, միակ... ճիշտ որ միակ, միայնակ ամբողջ աշխարհում... (Երեսը դարձնում է դէպի հասարակութիւնը): Ես հիմա ճշմարիտ որ մենակ եմ ամբողջ աշխարհում... Ա՛, Մակրինա, Մակրինա! (Զանգահարում եւ ցրած մոքով ու մոլար հայեացրով իր առաջն է նայու): Մակրինան, իմ գայեակը, քրոջս էլ պահել, խնամել էր, յետոյ էլ գայադի մէջ էր դրել... Ա՛խ, այն լճակը, այն լճակը! .

## 2 ԵՐԵՒՈՅԹ

**ՍՊԱՍԱԿՈՐ.** (Ներս է զալիս): Տիրուհի, դժուք բարեհանցիք դանգահարելու:

**ԲՐՈՆԿԱ.** Այն, ասա ծառաներին, որ լճակի սառուցի վրայից ձիւնը սրբեն, մաքրեն:

**ՍՊԱՍԱԿՈՐ.** (Ղանգնում եւ լրում է):

**ԲՐՈՆԿԱ.** (Անհամքեր կերպով): Էլ ինչի՞ ևս սպառում:

**ՍՊԱՍԱԿՈՐ.** Տիրուհի, երկու ժամ առաջ սարսափելի փոթորիկ էր, երկու արշինից աւելի ձիւն է կուտակւել, պէտք է երկար մաքրել:

**ԲՐՈՆԿԱ.** (Անհամքեր կերպով): Դա նշանակութիւն չունի: Ամբողջ գիւղը հաւաքիր, լճակը պէտք է մաքուր լինի, ինչպէս տպակի, ասա որ սառուցը կոտրեն, ծակ բանան. Կանչիր ձկնորսներին և պատրաստիր կերուները: Այսօր ձուկ պիտի որսանք:

**ՍՊԱՍԱԿՈՐ.** Բոլորը կը կատարեմ, ինչպէս հրամայում է տիրուհիս:

**ԲՐՈՆԿԱ.** (Խիստ յուզած): Բայց այդ բոլորը պէտք է շուտ կատարի, շնուր, շնուր:

(Սպասատորը՝ զլուխ տալով ուզում է դրս զնալ):

**ԲՐՈՆԿԱ.** Ո՞րտեղ է պան կազիմիրը:  
ՍՊԱՍԱԿՈՐ. Փակւել է իր սենեակում և հրամայել է ասելու...

**ԲՐՈՆԿԱ.** Ի՞նչ է հրամայել ասելու:  
ՍՊԱՍԱԿՈՐ. Որ այսօր դուրս չի գալու, որովհետեւ պիտի աշխատի:

**ԲՐՈՆԿԱ.** (Չայնը երկարացնելով): Հա—ա: Դէ, որ այդպէս՝, ինդրիք նրան, որ մի քիչ յետոյ այստեղ գայ:

(Սպասատորը կրկին զլուխ է տալիս, ուզում է հեռանալ):

**ԲՐՈՆԿԱ.** (Յանկարծօրէն շփոթւած եւ քաշելով): Իսկ պանին տեսնել ես:

**ՍՊԱՍԱԿՈՐ.** Մի քիչ առաջ պանը անտառ գնաց: ԲՐՈՆԿԱ. (Անհանգիստ կերպով): Մենակի:

**ՍՊԱՍԱԿՈՐ.** Ո՛չ, այն պաննայի հետ, որ մեզ հիւր է:

**ԲՐՈՆԿԱ.** (Նայում է նրան): Հը՛մ. ուրեմն լաւ է... (Մտախոն): Խնդրիք Մակրինային, որ ինձ մօտ գայ, բայց չըմոռանաս, որ ձիւնը լճակից, որքան կարելի է, լաւ մաքրեն, սառուցը կոտրեն, անցը բանան և կերոնները պատրաստեն, իսկ Մակրինային կանչիր, որ հէնց հիմա գայ (Սպասատորը դրս է գնում):

## 3 ԵՐԵՒՈՅԹ

**ԲՐՈՆԿԱ.** (Մենակ, զլուխը բռնած ծեռքերի մէջ, ման է զալիս սենեակում): Մենակ եմ, մենակ, մենակ... Նա գնացել է եւայի հետ... Կազեան փակւել է իր սենեակում... Ամբողջ տաս մէջ միայն Մակրինան է և ես... հա-հա-հա... (Չարունակում է ման զալ սենեակում): Ընդամենը երկու օր առաջ ես նրա միակն էի, միակը, իսկ այսօր, այսօր... (Նորից բանում է նամակը եւ շշնջալով կարդում է): «Հազիւ անցել է մի շաբաթ, բայց ես այնպէս բռնուն կերպով կարօտել եմ քեզ, այնպէս փափազում եմ քեզ տեսնելու...» (Նամակը ձգում է յատակին): Սուտ է, սուտ! (Մի օրեւ մտածելուց յանոյ, կունում է, նամակը վերցնում ու համբուրում): Ո՛չ, ոչ, դա սուտ չէ: (Բնրշութեամբ հարթում է նամակը եւ նստում օսմանեան բազմոցի վրայ): Այսպէս էր համելի Աստծուն, այսպէս էր կամենում Աստւած...

## 4 ԵՐԵՒՈՅԹ

Ներս է զալիս Մակրինան եւ կամաց կանգ առնում դրան մօտ:

**ԲՐՈՆԿԱ.** (Չընկատելով Մակրինային կրկնում

է աւելի եւ աւելի թուլացող ծայնով): Այսպէս էր կամենում Աստևած... (Ընդմիջում):

**ԲՐՈՆԿԱ.** (Վախեցած՝ վեր թոշելով տեղից): Ո՞վ կայ այստեղ: (Յանկարծ նկատում է Մակրինային): Այս ԱՌի, այդ գու ես, Մակրինա: Ի՞նչ լաւ, ո՞ր դու այստեղ ես: (Մօտենալով նրան՝ ձեռքից բռնում է եւ նըստեցնում իր մօտ): Լաւ է, որ դու եկել ես, Մակրինա, շատ լաւ է... (Յանկարծօրէն ուշադրութեամբ նայելով Մակրինային): Ասա ինձ, որ անդից յանկարծ այդպիսի միտք ծագեց քեզանում՝ այսպիսի ցրտին, այսպիսի բուք-բօրանին այսքան օրւայ ճանապարհ կտրել ինձ այցելութեան գալու: Այսքան տարի դու չէիր էլ մտածում տեսութեան գալու քո մեծացրած երեխային, որի համար, նրա որբանալու բոպէից, դու դարձար ամենալաւ մայր, և յանկարծ... (Ընդհատում եւ զարմացած նայում է Մակրինային):

**ՄԱԿՐԻՆԱ.** (Մտախո՞): Ո՞չ, ամենեին ցանկարծ, չըպատահեց իմ գալը: Ես քեզ գուրգուրել, պահպանել եմ աչքիս լոյսի պէս, այնպէս եմ եղել քեզ համար, որից լաւ հարազատ մայրն էլ չէր կարող լինել:

**ԲՐՈՆԿԱ.** Օրօրոցից սկսած՝ դու ինձ մեծացրել ես... և երբ դեռ փոքր էի... դու ինձ կերակրել ես քո կաթով... Գիտես, Մակրինա, դու բոլորովին չես ծերացել, էլի այնպէս հանգիստ, բարի ու մեղմ ես:

**ՄԱԿՐԻՆԱ.** (Գլուխը շարժելով): Հանդիսատ, բարի ու մեղմ:

**ԲՐՈՆԿԱ.** Մակրինա, յիշնում ես, երբ ես անհանգիստ էի լինում, ինչպէս դու զգուշութեամբ վերցնում էիր ինձ օրօրոցից և ամբողջ գիշերները գրկած մանածում սենեակում, նանիկ ասում, սեղմում կրծքիդ:

**ՄԱԿՐԻՆԱ.** Մինչև օրօրոց դնելն էլ քեզ լաւ յիշում եմ:

**ԲՐՈՆԿԱ.** (Յանկարծ): Ի՞նչ ես ասում:

**ՄԱԿՐԻՆԱ.** (Հանգիստ կերպով): Քո լոյս աշխարհ գալուց էլ վաղ եմ ճանաչում քեզ: Ես քեզ փայփայում, տաքացնում, համբուրում էի, որ կեանք ներշնչեմ քեզ... (Մտախո՞): Իսկ հիմա եկել եմ քեզ մօտ, որ մատներով փակեմ այն աչքերը, որ հէնց ինքս եմ իմ համբոյրներով բացել կեանքի համար...

**ԲՐՈՆԿԱ.** (Վեր է թոշում տեղից): Երազ չէ սա, արդեօք:

**ՄԱԿՐԻՆԱ.** Երազ չէ, ասում ես: Բայց ինչ է կեանքը: Նոյն երազը չէ, արդեօք: Անյայտ ասաղը իր շողինով կեանքը արթնացնելով՝ թափառում է, թափառում, ապա դժգունանում՝ չընասկանալով ոչ իր նշանակութիւնը, ոչ էլ այն մարդկանց ճակատագիրը՝ որոնց աշխարհ գալու ժամանակ՝ նա առաջին անդամ շողում է իր ցանկալի, բարեբեր ճառագայթով, ապա

երկար, երկար տարիներից յետոյ նորից վերադառնում է, որ կործանէ հէնց իր սաեղծած կեանքը: **ԲՐՈՆԿԱ.** (Կամաց կամաց ձեռքը մեկնում է դէպի զանգակը):

**ՄԱԿՐԻՆԱ.** (Ժպտալով): Ի՞նչի՞ դու վախենում ես ինձանից: Ուզում ես ծառաներին կանչչու: Կարելի է դու ուզում ես ինձ դժուրս անել այստեղից.. (Բոնում է Բրօնկայի ձեռքից):

**ԲՐՈՆԿԱ.** (Սարսափած): Ի՞նչպէս պաղ է քո ձեռքը: Ի՞նչպէս պաղ է...

**ՄԱԿՐԻՆԱ.** (Քնիշութեամբ նայելով նրան): Բրօնկա, ի՞նչպէս դու այս բոպէիս կենդանի կերպով յիշեցնում ես քո հօրը... Այն ժամանակ նա նստած էր իր սենեակում, նստած էր, բայց յանկարծ շանթահար եղածի նման վեր թռաւ տեղից...

**ԲՐՈՆԿԱ.** Ի՞նչի՞ նա վեր թռաւ...

**ՄԱԿՐԻՆԱ.** Քոյրդ խեղդւել էր...

**ԲՐՈՆԿԱ.** Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ ասացիր:

**ՄԱԿՐԻՆԱ.** Քոյրդ խեղդւել էր... Ես ինքս դուրս հանեցի նրան լճակից, ահա ձեր պատուհանների առաջ գտնուղ լճակի նման մի լճակից: Ձեռքի վրայ վերցնելով փոքրիկ խղճուկ դիակը՝ զէս ու դէն շարժեցի. տաքացնում էի, սեղմում էի կրծքիս, համբուրում էի—բոլորը իզու ը... Համբոյրով ես նրան կեանքի կոչեցի, հէնց ես էլ նրա մարած աչքերը փակեցի իմ ձեռքով... Երբ ես բերում էի իմ թանկագին բեռը, քո հայրը, բարի արձանի նման, կանգնած էր վերանդայի դռան մօտ, իսկ դու պառկել էիր ու երեսդ թաքցրել խոտերի մէջ:

**ԲՐՈՆԿԱ.** (Նայում է նրան մոլար հայեացըով): Մակրինա, ինձ թուում է, թէ ես հիւանդ եմ: Զեմ հանկանում քեզ, դու նրա համար ես ինձ ու քրոջ համբուրելով՝ կեանքի հրաւիրել, որ ապա պաղ ձեռքերով փակես մեր աչքերը: Զէ որ դու այսպէս ասացիր, այսու Մէկ էլ դու ասացիր, թէ կան աստղեր, որ մարդկանց կեանքի են կանչում, ապա հեռանում, գնում են իրանց երկնային նախասահմանութերի անիմանալի ճանապարհով և վերադառնում են, որ ոչնչացնեն հէնց իրանց ճառագայթով փառած կեանքը: Դու այսպէս ասացիր: Այս, ինչպիսի հրաշալի հէքեաթներ ես պատմում... Օ՛, մէկն էլ պատմիր ինձ, մէկն էլ... Սպասիր, ես այնպէս տարօրինակ եմ, քնաթաթախ... Ճիշտ է! Կան այդպիսի աստղեր, որ մարդու քաշում, յափշտակում, զիշատառում են: Պէտք է զնալ նրանց յետեկից—դէպի երկնաքի բարձունքը, դէպի անդունդի խորութիւնը, ովկիսանոսների անհունութիւնը, միենոյն է, պէտք է զնալ նրանց յետեկից, պէտք է... (Մեղմում է Մակրինային): Նա գնաց իր աստղի յետեկից, իսկ իս,

Մակրինա, իսկ ես, մենամենակ։ Զէ որ դու ձեռքեւ  
ըետ վրայ կը լեցնես ինձ և ուսերիդ վրայ կը լուսնես,  
որ գնես իմ հօր ոտների մօտ... Կը տեսնեմ քրոջս...  
Կը տեսնեմ մօրս... Մակրինա, դու այնպէս հանգիստ,  
բարի ու մեղմ ես... Ա՛խ, ինչպէս ես քնաթաթախ եմ...  
Նստիր ինձ մօտ, Մակրինա։ (Ընկնում, մեկնում է ունանեան բազմոցի վրայ եւ աշքերը փակրում):

ՄԱԿՐԻՆԱ. (Կամաց վեր է կենում, նայում է նրան եւ ծանր ու հպարտ քայլածքով դուրս է զնում սենեակից):

Մի լուսէ խորին լուսթին. Բրօնկան  
ընած է երեւում։ Ներս է մտնում Կազի-  
միրը ու մօտենում Բրօնկային։

### 5 ԵՐԵՒՈՅԹ.

ԿԱԶԻՄԻՐ. Բրօնկա, ի՞նչ է պատահել քեզ,  
ԲՐՈՆԿԱ. (Քնից զարթեցրածի նման): Ա՛խ, Կա-  
զիա, Կազիա, ինչ լաւ, որ երկար։  
ԿԱԶԻՄԻՐ. Միթէ քնել էր, Բրօնկա։

ԲՐՈՆԿԱ. Չը գիտեմ, չը գիտեմ, չը գիտեմ։ Գլուխս  
այնպէս ծանրացած է... Ինքս էլ բոլորովին, բոլորո-  
վին մենակ եմ... Թաղէուշը եւայի հետ գնացել է ան-  
տառ. իսկ ես մենակ իմ մնացել... Կազիա, ինչի՞ ես  
այսպէս մենակ եմ։

ԿԱԶԻՄԻՐ. (Վախեցած): Բայց չէ որ Մակրինան  
քեզ մօտ էր։

ԲՐՈՆԿԱ. (Շփումէ ճակառը, տրորումէ աշքերն  
ու քունքերը): Մակրինան։ Ի՞նչ ես ասում։ Մակրինան։  
Երազում տեսայ Մակրինային, հօրս, մօրս... Կազիա,  
Կազիա! Մօրս տեսայ երազում։ Գիտեմ, այդ ինչպէս  
եղաւ։ Ես գնում էի, գնում, գնում մի ինչոր ամայի  
ու զարիվայր գաշտով. շրջապատում, դորշ աղջամուղի  
մէջ, միայն խաչեր էին փայլիքում. յանկարծ պատա-  
հում է ճանապարհին նստած մի ինչոր կին... Ես չէի  
տեսնում, չէի լսում ոչինչ, բայց զգում էի, որ իժ  
մայրն է այնտեղ նստած, մեռած մանկանը սեղմում  
է կրծքին։ Հա-հա-հա! Կազիա, ինչի՞ այդպէս վախեցար։  
Լո՞ր։ Եւ տեսնում է, թէ ինչպէս իր միւս երեխան  
բորիկ ոտներով քարշ է գալիս փշոտ շաւիզով, խո-  
ռոշներով... հաղիւհաղ շարժում է՝ շարունակ լեռն ի  
վեր, լեռն ի վեր։ Եւ այդպէս գնում եմ, գնում եմ,  
կարծես մէկը առաջը զցած քշում էր ինձ։ Այդ մի-  
ջոցին մայրս վայր է գնում մանկանը, որին սեղմում  
էր կրծքին, և ձեռքերը տարածում է դէպի ինձ, իսկ  
ես չափազանց յոդնած ընկնում եմ մօրս զիրկը... Եւ  
յանկարծ, կարծես, հողմը վչեց, մշուշը ցրւեց, և ես

ինձ զգացի կմախքի երկաթեայ սարսափելի զրկում...  
0...

ԿԱԶԻՄԻՐ. Բրօնկա, Բրօնկա, դու հիւանդ ես։  
ԲՐՈՆԿԱ. Հա-հա-հա, հիւանդ եմ, հիւանդ եմ...  
Ի՞նչ է նշանակում հիւանդ լինել!? (Երկար նայում է  
կազմիրին, ապա խօսում է խորհրդաւոր կերպով):  
Կազիա, Կազիա, դու այսօր առաւօտեան ասում էիր,  
թէ սիրում ես ինձ։ Դա երազ էր, թէ իրականութիւն։  
Դմւ ասացիր, որ սիրում ես ինձ։

ԿԱԶԻՄԻՐ. Այն, այն, ասացի և էլի կրկնում եմ,  
որ սիրում եմ քեզ։

ԲՐՈՆԿԱ. Ա՛խ, ինչ լաւ է, որ դու ինձ սիրում  
ես! Դու ինձ չես թողնիլ, Կազիա։ Այնպէս չէ։  
ԿԱԶԻՄԻՐ. Ո՞չ։

ԲՐՈՆԿԱ. Բայց գիտե՞ս, թէ ինչի՞ թաղէուշը ինձ  
թողեց։

ԿԱԶԻՄԻՐ. Գիտեմ։

ԲՐՈՆԿԱ. Ես էլ գիտեմ։ Ճիշտ էիր ասում, Կա-  
զիա, այնպէս չէ։

ԿԱԶԻՄԻՐ. Ի՞նչը։

ԲՐՈՆԿԱ. Որ ես ձիւն եմ եղել, այնպիսի բարի,  
սպիտակ ձիւն, որ գրկում է սառած գետինը և տա-  
քացնում է նրան։ Այնպէս չէ, Կազիա։

ԿԱԶԻՄԻՐ. (Ճուղխո՞ն): Այն... Բայց կարելի է, դու  
եղել ես մի բարի և բուժիչ ձեռք, որը փաղաքշց վի-  
րաւոր թոշնակին... Ինչպէս նրա համար լաւ էր քեզ  
մօտ, քանի գեռ հիւանդ էր, իսկ հիմա նրա թևերը  
մեծացել են, մկանունքները ամրացել և նա պատ-  
րաստւում է թռչելու... Ասենք, պատրաստելու ոչինչ  
չըկայ. նա արդէն իր թևերը կարգի է բերել...

ԲՐՈՆԿԱ. (Վախեցած): Մի ասի այդ բանը։

ԿԱԶԻՄԻՐ. (Վրդովւած): Ընդհակառակը ես հէնց  
կը մասին պիտի խօսեմ։ Թաղէուշը եւայի հետ կը  
թռչէ, կը հեռանայ քեզանից։

ԲՐՈՆԿԱ. Եւայի՞ հետ, Եւայի՞ հետ։ Ո՞վ է այդ  
եւան։ Ի՞նչ է նա։

ԿԱԶԻՄԻՐ. Ո՞վ է նա կամ ի՞նչ է։ Ինձ համար՝  
մի յաջող գիպւած, իսկ քեզ համար—հիւանդագին մըզ-  
ձաւանջ և թաղէուշի գժոխային կրքի առարկան։ Ահա  
ինչ է եւան։ (Քմծիծաղ տալով): Դեռ չես հասկա-  
նում։ Ուրեմն լսիր։ Եւան—ինձ համար յաջող գիպւած  
է, որովհետև՝ առանց նրան՝ ես երբէք չէի տեսնի քո  
ամբողջ ոյժն ու գեղեցկութիւնը։ Քեզ համար Եւան—  
գարհուրանք ու սոսկում է, որովհետև դու զգում ես,  
որ նա զլորում է քեզ յուսահատութեան սև անդունդը,  
զգում ես, որ նա քեզանից լսլում, յափշտակում է  
թաղէուշին, որի համար գժոխային կիրք է նա, մարմ-  
նացումը անյաղթելի ոյժի և իշխանութեան, մարմնա-

ցումը խոռվայոյգ թախիծի, որ վեր է քաշում նրան, վեր—դէպի երկինքը!

**ԲՐՈՆԿԱ.** (Վեր է թոշում տեղից եւ ուղղում է): Նայիր—ես ուժեղ եմ ու բաւականաչափ սառնարիւն ու հզօր, որ կարողանամ ոչնչացնել, կոխկոտել նրան էլ, նրան էլ! Ես ամենքից էլ զօրեղ եմ: Ես կըյօշուեմ և կըսպանեմ եւային, որովհետեւ միայն ես, մենակ ես եմ թագէուշի թախիծի առարկան!

**ԿԱԶԻՄԻՐ.** Երա թախիծի սլաքը քեզանից հեռու մի կողմն է ընկել:

**ԲՐՈՆԿԱ.** (Խելազարածի պէս): Բայց նայիր ինձ, կազեա, նայիր! Տես, ես էլ մատաղահաս եմ, գեղեցիկ... Նա միշտ կրկնում էր, ինչպէս դու գեղեցիկ ես! Ինչի՞ հապա նրա թախիծը մի կողմը թողեց ինձ:

**ԿԱԶԻՄԻՐ.** (Բոնում է նրա ձեռքերից եւ իօսում է մեղմ ու սիրալիր): Ինձ համար դու գեղեցիկ, վսեմ ու նւիրական միթարանք ես:

**ԲՐՈՆԿԱ.** (Նայում է նրան, ապա յանկարծօրէն): Դու ինձ գայթակղեցնում ես:

**ԿԱԶԻՄԻՐ.** Ո՛չ, Բրօնեա, ոչ: Հէնց այսօր առաւտեան ասացի, որ ես արհամարհանքով կըմերժէի քո փոխադարձ սէրը: Բայց ես սիրում եմ քեզ և գտնում եմ, որ դու շատ գեղեցիկ ես՝ չընայած քո թուլութեանը և վստահութեանը... Ինչոր չար բան է կատարում այս տանը, և ես ուզում եմ քեզ համար լինել եղայր, մտերիմ բարեկամ, ինչոր միայն ուզես...

**ԲՐՈՆԿԱ.** Կազեա, դու այդ բանը լուրջ ես առւմ:

**ԿԱԶԻՄԻՐ.** Միթէ այդքան էլ ինձ չես ճանաչում:

**ԲՐՈՆԿԱ.** (Շոյելով նրան): Ճանաչում եմ քեզ, կազեա, ճանաչում եմ: Ես մենակ եմ ամբողջ աշխարհում, մենակ. դու նոյնպէս մենակ ես... Ես սիրում եմ, բայց ոչ թէ քեզ, այլ քո բարի ու գեղեցիկ զգացմունքները: Ասա ինձ, կազեա, ինչի՞ այսպէս քնաթաթախ եմ ու տանջւած:

**ԿԱԶԻՄԻՐ.** (Հոգատար ու ընքոյշ կերպով): Դու ամբողջ գիշերը չես քնել:

**ԲՐՈՆԿԱ.** Օ՛, ինչպէս նրան տանջում էի! Ինչպէս մենք տանջեցինք միմեանց:

**ԿԱԶԻՄԻՐ.** Նա ի՞նչ էր ասում քեզ:

**ԲՐՈՆԿԱ.** Ոչինչ, ոչինչ, ոչ մի բան: Նա բարի էր, քաղաքավարի, սիրող, բայց ես հասկացայ, որ նրա թախիծի սլաքը ինձանից հեռու, հեռու մի կողմն է ընկել (յանկարծակի ծիչով): Կազեա, մւր է թագէռւը:

**ԿԱԶԻՄԻՐ.** Նա եւայի հետ գնացել է անտառ:

**ԲՐՈՆԿԱ.** (Յանկարծօրէն մտախմ): Անցաւ անտառներով, սարերով, ծովերով... Անցաւ ոտի տակ

տալով Բրօնկային, իր միակ, սիրելի Բրօնկային, այժմ այսպէս լքւած Բրօնկային! Դէպի ուր!

**ԿԱԶԻՄԻՐ.** (Չոյելով նրա ձեռքը): Զըգիտեմ:

**ԲՐՈՆԿԱ.** Կազեա, կազեա, չը գիտեմ, երազի մէջ տեսայ, թէ իսկապէս Մակրինան այստեղ էր:

**ԿԱԶԻՄԻՐ.** Ես նրան պատահեցի միջանցքում:

**ԲՐՈՆԿԱ.** Հմահմահ: Պատահեցիր նրան... Ասա, ինձ, ի՞նչ ես գու:\*

**ԿԱԶԻՄԻՐ.** (Խորհրդաւոր կերպով ժպտալով): Հըմ... Կարելի է Մակրինայի եղբայրն եմ, որովհետեւ ոչ ոք քեզ այնպէս չի սիրել և չի սիրում, ինչպէս ես ու Մակրինան:

**ԲՐՈՆԿԱ.** Ճիշտ ես ասում, ճիշտ:

**ԿԱԶԻՄԻՐ.** Ճիշտ է, Մակրինան հեռուից է եկել քեզ մօտ, ես էլ հեռուից եմ եկել՝ որ ասեմ, թէ սիրում եմ քեզ: (Ընդմիջում):

**ԲՐՈՆԿԱ.** Այս, այս, դու և Մակրինան:

## 6 ԵՐԵՒՑԹ

Ներս է գալիս սպասարոր:

**ՍՊԱՍԱՒՈՐ.** Տիրուհի, ծիւնը սրբել են:

**ԲՐՈՆԿԱ.** Այս, շատ շնորհակալ եմ: Իսկ սաստցի վրայ անցք բացմած է:

**ՍՊԱՍԱՒՈՐ.** Այս:

**ԲՐՈՆԿԱ.** Իսկ ասել ես, որ ձկնորսներին կանչեն:

**ՍՊԱՍԱՒՈՐ.** Այս:

**ԲՐՈՆԿԱ.** Կերոնները պատրամստ են:

**ՍՊԱՍԱՒՈՐ.** Պատրաստ են, տիրուհի:

**ԲՐՈՆԿԱ.** Շնորհակալ եմ: Կարող ես գնալ: (Սպասարոր գնում է):

## 7 ԵՐԵՒՑԹ

**ԿԱԶԻՄԻՐ.** Ի՞նչ է նշանակում այդ բոլորը:

**ԲՐՈՆԿԱ.** Ոչինչ չի նշանակում, գնում եմ ձուկ որսալու... (Յննողական ծեռով): Կազեա, կը գաս ինձ հետ:

**ԿԱԶԻՄԻՐ.** Կը գամ ուր որ ցանկաս: (Ընդմիջում):

**ԲՐՈՆԿԱ.** (յանկարծ ուրախ): Յիշում ես, ինչպէս երէկ և առաջի օրը մենք հրաշալի կերպով սահում էինք լճակի վրայ:

**ԿԱԶԻՄԻՐ.** (Մտախոհ նայելով դէպի հեռուն): Յիշում եմ:

**ԿԱԶԻՄԻՐ.** (Սկզբից արագ, յետոյ աստիճանաբար ծանր): Ինչի՞ դու այդպէս յանկարծ մտածմունքի մէջ ընկար և այդպէս երկար դիտում ես կապոյտհետուն, ձիւնափայլ հեռուն ու այդ սկ վարելահովերը, որ կը

ծածկւին կանաչ աշնանացանով, երբ ձիւնը հարփի, չքանայ...

ԿԱԶԻՄԻՐ (արձագանքի նման): Երբ ձիւնը՝ հալ- ւի չքանայ...

ԲՐՈՆԿԱ. Կազեա, դու իսկապէս սիրում ես ինձ, ԿԱԶԻՄԻՐ. Սիրում եմ!

ԲՐՈՆԿԱ. Բայց չէ որ դու գիտես, որ ես միայն Թաղէուշին եմ սիրում:

ԿԱԶԻՄԻՐ. Գիտեմ:

ԲՐՈՆԿԱ. Եւ դու այնքան մաքուր ես, որ կը կա- րողանայիր արհամարհել իմ փոխադարձ սէրը:

ԿԱԶԻՄԻՐ. Այո, ես քեզ կատէի, եթէ նոյն իսկ մի փոքրիկ ակնարկ անէիր քո փոխադարձ սիրով մասին:

ԲՐՈՆԿԱ. Իսկ եթէ ես մի բանի համար քեզ շատ ու շատ ինդրէի, դու կարո՞ղ կը լինէիր կատարել:

ԿԱԶԻՄԻՐ. Ի՞նչ:

ԲՐՈՆԿԱ. (Հարցական ծետվ): Նոյն իսկ և մյու: (Մի ըռպէ լուսթին: Երկար նայում են միւնեանց):

ԿԱԶԻՄԻՐ. (Մտախո՞): Բոլորը, բոլորը:

ԲՐՈՆԿԱ. (Յանկարծակի): Ո՞րտեղ են սահուկ- ները:

ԿԱԶԻՄԻՐ. Ի՞նչ պիտի անենք սահուկները:

ԲՐՈՆԿԱ. Ցոյց տալու համար, ցոյց տալու հա- մար...

ԿԱԶԻՄԻՐ. Լաւ: Ի՞նչպէս կամենաս:

ԲՐՈՆԿԱ. Թող այդպէս լինի:

ԿԱԶԻՄԻՐ. Հը... Թող այդպէս լինի:

ԲՐՈՆԿԱ. (Սարսափելի կերպով զարնուրած):

Պէտք է կատարւի:

ԿԱԶԻՄԻՐ. Այո! (Քմծիծաղ է տալիս): Բայց ինչիք հրամայել ես կանչել ձկնորսներին: Ի՞նչիք են պէտք ծառաները և կերպները:

ԲՐՈՆԿԱ. (Նայում է Կազիմիրին): Ճշմարիտ է, ճշմարիտ! Կարելի է այնպէս անել, որ ոչոք չիմանայ: Համար համար միտք! Նրանք կարող են հնաց վերջին բոպէին փրկել... Համար համար կա- տակերգութիւն է թելազըել ինձ իմ տանջւած սիրուր... (Զանգանարում է):

## 8 ԵՐԵՒՈՅԹ

Ներս է գալիս սպասատրը:

ՍՊԱՍԱՒՈՐ. Ի՞նչ էք հրամայում, տիրուհի:

ԲՐՈՆԿԱ. Ասա, որ այսօր ձկնորսութիւնը չի լի- նի: Վաղը առաւօտեան, հասկանում ես, վաղը առա- ւօտեան:

ՍՊԱՍԱՒՈՐ (զարմացած): Բայց ամեն բան ար- դէն պատրաստ է:

ԲՐՈՆԿԱ. Շատ գեղեցիկ: Բայց մենք ձուկ պիտի բանենք վաղը առաւօտեան: Համար, անսովոր ձուկ...

ՍՊԱՍԱՒՈՐ. Ուրեմն կերպներ էլ պէտք չեն: ԲՐՈՆԿԱ. Դեռ չես հասկացել, թէ ինչ եմ առում:

ՍՊԱՍԱՒՈՐ. Հասկացել եմ, տիրուհի, բայց լճակը արդէն մաքրած է:

ԲՐՈՆԿԱ. Շատ լաւ:

ՍՊԱՍԱՒՈՐ. Սառոյցի վրայի անցքն էլ պատ- րաստ է:

ԲՐՈՆԿԱ. Աւելի լաւ:

ՍՊԱՍԱՒՈՐ. Ուրեմն ամեն բան յետաձգել:

ԲՐՈՆԿԱ. Ես այդ բանը հազար անգամ կրկնեցի: (Սպասաւորը՝ զլուկի տալով՝ հեռանում է):

## 9 ԵՐԵՒՈՅԹ

ԿԱԶԻՄԻՐ. Ուրեմն վճռած է, գնանք!

ԲՐՈՆԿԱ. Գնանք: Զ՞ո՞ որ քեզ համար միւնոյն է այնտեղ տիրել, թէ այստեղ: (Հիստէրիքական ծի- ծաղ):

ԿԱԶԻՄԻՐ. Բոլորովին միւնոյն է: Եւ վերջապէս իմ անձնաւորութիւնը կատարելապէս կը համոզէ ամեն- քին, որ երկուս պատահմամբ ենք ընկել լճակի մէջ! (Ծիծաղում են):

ԿԱԶԻՄԻՐ. Նոյն իսկ կարիք չը կայ կտակ գրելու...

ԲՐՈՆԿԱ. (Ներլորէն պատրաստում է): Հա- մար համար!... առանց կտակի, առանց կտակի.. Դու ար- դէն պատրաստ ես:

ԿԱԶԻՄԻՐ. Վաղուց պատրաստ եմ:

ԲՐՈՆԿԱ. Գնանք, ուրեմն գնանք... (Նայում է շորջը, հայեացրով կարծի հրաժեշտ է տալիս շրջա- պատին. ապա դուրս են գնում):

## 10 ԵՐԵՒՈՅԹ

Բեմը սի ըռպէ դատարկ է: Ներս է զալիս Մակրինան եւ զննում է բոլոր ան- կիւները:

ՄԱԿՐԻՆԱ. Գնացել են, արդէն գնացել են... իմ հունձը... մէկին տարել էի ձեռքերով գրկած... հիմա էլ միւսին... (Հանդարտ շրջում է սենեակի բոլոր կողմերը, ապա՝ մօտենում է օսմաննան բազմոցին): Այս- տեղ էր նստում իմ չքնաղ, իմ ճերմակ աղաւնեակը... Այստեղ... ես նրան ամենից շատ էի սիրում... (Շարու- նակում է շրջել սենեակում, շօշափելով կարսախները). Այստեղ... Այստեղ էր իմ աղաւնեակը թաքնում իր

արցունքները... (Մօտենում է բազկաթոռին): Հեսց  
այսօր առաւտեան Բրօնկան նստել էր այստեղ...  
Բրօնկան... Բրօնկան... Բայց էլ չի վերադառնայ...  
չի վերադառնայ... Այն գեղեցիկ բազէն նոյնպէս չի  
վերադառնայ... Այդպէս պիտի լինէր... Մօր դժգոյն  
ուրւականը թափառում է տան մէջ և կանչում է ..  
կանչում է... Զեն վերադառնայ, այլև չեն վերադառ-  
նայ երբէք... Հիմա ես այստեղ կը մնամ...

Անշարժ նստում է. կարծես սառչում,  
արձան է կտրում տեղի ու տեղը):

### ՎԱՐԱԳՈՅՑ





Բացւած է 1912 թ. բաժանորդագրութիւնը

**XXX ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ** **XXIII ՏԱՐԻ**

ՊԱՏԿԵՐԱԳԱՐԴ ՀԱՆԴԵՍԵՐԻ

Հրատարակում են ճոխ, բազմաբովանդակ, մասնակցութեամբ մեր և եւրոպական յայտնի գրականագէտների, մանկավարժների և արւեստագէտների:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ են.

I. ԱՂԲԻՒՐ պատկերագարդ ամսագիրը «ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՌՀ» յաւելւածով:

II. ՏԱՐԱԶ պատկերագարդ հանդէսը «ԹԱՏՐՈՆ և ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ» յաւելւածով:

III. ԱՌՈՂՋԱՊԱՀ ամսաթերթը:

IV. ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ V և VI պրակներ.

V. ՕՐԱՑՈՅՑ-ԱԼՄԱՆԱԿ 1913 թ.

VI. ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ:

VII. ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԳԻՒՂՈՒՄ, բազմագոյն հրաշագեղ պատկեր, պատրաստած Եւրոպայում:

VIII. Հայոց ապագայ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ մեծադիր պատկերը:

IX. MONA LISA (Ձիակոնդա) Լուվրի մուզէից գողացւած տիեզերահոչակ հիասքանչ նկարի իսկական պատճենը, հոյակապ զարդ ամենափարթամ դահլիճի:

X. Մեծն նապօլէօն I և հայոց Լեռն վերջին թագաւոր: Նապօլէօն Բօնապարտի մանկութիւնը պատկերներով: Երեսնամեաթ ԱՂԲԻՒՐԸ, souvenir.

Այս բոլորի տարեկան բաժանորդագինը

**10 ր., արտասահմ. 18 ր. կամ 50 ֆր**

**Դպրոցական աշակերտների համար**

Աղբիւրը տարեկան 2 ր.

ԱՂԲԻՒՐ և ԱՌՈՂՋԱՊԱՀ տարեկան 3 ր.

ԱՂԲԻՒՐ, ԱՌՈՂՋԱՊԱՀ և ՏԱՐԱԶ առանց յաւելւածների, պրէմիաների և Թատրոն երաժշտութեան՝ տարեկան 4 ր.

Աղբիւր, Առողջապահ, Տարգ, զոլոր յանլասածներով պրէմիաներով 5 ր. (արտասահման 10 ր.)

Ապառիկ և մաս-մաս բաժանորդագրութիւն չի ընդունվում:

Հասցէն՝ Տիֆլիս, Ռեդակցիա „ԱԳԲԻՈՐ“ կամ „ТАРАЗ“.

Tiflis, (Caucase) Direction Agbür կամ Taraz.

Խմբագիր-հրատարակի՝ Տեգրուն և Զաքարեան

ՀՀ Ազգային գրադարան



NL0321143

16.062

891.85  
7-72